№ 118 ԶՈՐԵՔՇԱԲԹԻ, 3 ՅՈՒՆԻՍԻ

1915
ՌԱՍՈՒՆԶՈՐՐՈՐԴ ՏԱՐԻ

ԶՈՐԵՔՇԱԲԹԻ, 3 ՅՈՒՆԻՍԻ № 118

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 բուբլի. կէս տարվանը և 7 ամսվանը 6 բուբլի. ամսական 85 կոպ.
Առանձին համարները ՍՄԵՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.

Թիֆլիսում գրվում են խմբագրատանը.

Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція «Мшакъ» Соломоновская ул., № 21.

Tiflis, Rédaction „Mschak"
Խմբագրատան տելեֆոն № 2—53

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 (բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 20—10 կոպ.

Տպարանի տելեֆոն № 67.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՄՇԱԿԻ ԳՐԱՍԵՆԵԱԿԻ ԿՈՂՄԻՑ

Խնդրվում է այն բաժանորդներին, որոնք վճարել են տարեկան բաժանորդավճարի կէս մասը, ուղարկել նաեւ երկրորդ մասնավճար **5** *ռուբլին, որպէսզի թերթի առաքման գործում յուլիսի 1-ից ընդհատում տեղի չունենայ:*

Տարեկան բաժանորդավճարը չրացողները կը ստանան նաեւ խոստացված ՊՐԷՄԻԱՆ, որը լոյս կը տեսնի աշնանը:

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀ. ԿԱԹՈՂԻԿՈՍԻ

Բարձր հովանաւորութեան տակ գտնվող

ՀԱՅ ՆՊԱՍՏԱՄԱՏՈՅՑ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ,

կամենալով օգնութեան ձեռք կարկառել Վանի, Մանազկերտի, Սալմաստի և Խոյի շրջանների հայ աղէտեալ ազգաբնակութեան, որ ներկայումս գտնվում է ծայրայեղ սուր կարիքի մէջ և օրին անհրաժեշտ է շուտափոյթ սնունդ ու բժշկական օգնութիւն լայն չափերով, որոշել է յատկացնել իր միջոցներից 15,000 ռուբլի՝ այդ ահռելի կարիքին մասամբ բաւարարելու համար:

Ընկերութեանս վարչութիւնը դիմում է բոլոր գթասիրտ անձանց և հաստատութիւններին, խնդրելով չը խնայել իրանց լումաները, որպէսզի Նպաստամատոյց Ընկերութիւնը հնարաւորութիւն ունենայ աւելի մեծ ծաւալով օգնել հայ արկածեալ և կարօտ ժողովրդին մայր երկրում և Պարսկաստանում:

Ծով կարիքի հանդէպ ամեն մի նուիրաբերութիւն կընդունվի շնորհակալութեամբ:

Նուէրները կարելի է ուղարկել առ այժմ հետեւեալ հասցէով. Тифлисъ, Редакція газ. „Мшакъ" Նպաստամատոյց Ընկերութեանը յանձնելու համար:

առ. (ա. օ.) 371. 5—4

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄ

—o—

ՊԱՏԵՐԱԶՄ ԹԻՒՐՔԻԱՅԻ ԴԷՄ

—o—

ՌՈՒՍ-ԹԻՒՐՔԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ

(Պետ. Հեռ. Գործ.)
1—2 յունիսի

ԹԻՖԼԻՍ.—Պաշտօնական։ Կովկասեան զօրաբանակի շտաբի կողմից.

Մայիսի 30-ին մեր զօրքերը Օլթիի ուղղութեամբ խափանեցին Թիւրքերի փորձը՝ յարձակում գործելու Իշխանի վրա։

Սիվրի-չայ և Օլթի-չայ հովիտներում Թիւրքերը մի քանի անգամ յարձակման դիմեցին, որոնք սակայն անհետեւանք անցան։

Մայիսի 29-ին մեր զօրքերը գրաւեցին Ախալթ քաղաքը։

Մնացած ուղղութեամբ փոփոխութիւն չը կայ։

Մայիսի 31-ին Օլթիի ուղղութեամբ հրացանաձգութիւն է։

Մեր զօրքերը գրաւել են Սօրպ գիւղը, Վանի լճի հարաւ-արեւմտեան ափում։

ԹԻՒՐՔԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՇՈՒՐՋԸ

—

✦ «Б. В.»-ին հաղորդում են, որ դաշնակիցների մեծաքանակ օյժեր ափ են իջել ասիական ափում և պաշարել են Մաւրմաչի քաղաքը։

✦ Անգլիական և ֆրանսիական հիդրոաէրոպլանները թռիչք են կատարում Կ. Պոլսի վրա, առաջ բերելով սարսափ քաղաքի մէջ։

✦ Գերմանիան պահանջում է Թիւրքիայից ամեն գիշերներն անել Բոլգարիային, որպէսզի վերջինս չը խախտէ իր չէզոքութիւնը։

✦ Զմիւռնիայի ծոցում երևան են եկել գերմանական երկու սուզանաւ։

✦ Թիւրքահայ պատգամաւորներ Զոհրաբին և Վարդէսին Թիւրքերը կալանաւորել են և Կ. Պոլսից արտաքսել են Անգօրա։

✦ Կ. Պոլսում թռուցիկներ են տարածված, որոնց մէջ ասված է, թէ Էնվէր փաշան Կրուպպի գործարանների ամենախոշոր փայատէրերից մէկն է, ուստի և շահագրգռված է պատերազմը շարունակելու մէջ։ Այդ թռուցիկների առիթով Կ. Պոլսում կատարվում են մասսայական ձերբակալութիւններ։

✦ Կ. Պոլսում ներկայումս կան 70,000 վիրաւոր Թիւրք։

ՓՈՆ-ԳՆԴԱՊԵՏ ԿԱՐԱՈՒԼՕՎ

—

Կուսում աչքի ընկնելուն համար կովկասեան զինուորական շրջանի կապիտան Կարաուլով նշանակվում է փոխ-գնդապետ. նա միաժամանակ ներկայացվել է պարգևի Սաբլկամբշի մօտ եղած կռիւների համար։ Նոյն այդ կռիւների համար կապիտան Կարաուլովը ստացել է արդէն Դէօրգի խաչ։

Կրկնակի պարգևատրութիւնը համապատասխանում է բացառիկ քաջութեան։

Սաբլկամբշի կրիտիկական օրերին, երբ քաղաքում գրեթէ զօրք չը կար, Բուլատովի շտապով կազմած վաշտը, դանդաղօրէն ետ քաշվելով, դիմադրում էր Թիւրքերի յարձակմանը քաղաքի կողմից, իսկ կայարանի բաղդը մազից էր կախված. գեներալ Միշլաեվսկին կարաւրգանից Սաբլկամբշ ուղարկեց կապիտան Կարաուլովին առանձին միասիայով՝ կարգաւորել պաշտպանութիւնը և դիմադրել՝ ինչ էլ լինի՝ մինչև օգնական զօրքի գալը։

Երկու օֆիցէրի ուղեկցութեամբ, առանց օրէնք պահակախմբի, կարաուլովը Թիւրքերի կրակների տակով, խաուղով մտաւ քաղաք։ Դեկտ. 13-ի ամբողջ երեկոն և 14-ի գիշերը աշխատանքը եռում էր։ Շտապ պատրաստվում էին վաշտեր, ոչ թէ հազարներով, այլ տասնեակներով, անում էին տեղաշարժումներ զօրքերի մէջ. արտիլերիան դասաւորվում էր այնպէս, որպէսզի կարելի լինի շեշտակի կրակով վերցնել Թշնամուն։

Այդ կարգադրութիւնները, այլ և աւելին, Կարաուլովի երանելի քաջութիւնը, որ արտայայտվեց ամենավտանգաւոր տեղերում և որ կարողանում էր ստորադրեալներին ներշնչել հատատ հաւատ դէպի այն բանը, որ Սաբլկամբշը չը պէտք է ընկնի և չի ընկնելու,—հրաշքներ գործեցին։ Բազմահազար Թիւրքերի յարձակումը կանգնեցվեց մեր հարիւրներով։ Կայարանի անմիջական վերտանը հեռացվեց։ Քաղաքը պաշտպանվեց մինչև նոր օյժերի գալը, որոնց գլուխ էր կանգնած գնդապետ Բարկովսկին, որը յետոյ ընկաւ Կարաւրգանի մօտ։ Այնուհետև գալիս են գեներալ Պրժեվալսկին իր պլաստունների գլուխն անցած։ Կարաուլովը այդ երկուսի շտաբի պետն էր։

Մեր թոյլ վաշտերի յարձակման դիմելու յանդգնութեան չափ համարձակ ծրագիրը, որի գործադրութեան ժամանակ գերվեց Թիւրքաց 9-րդ կօրպուսը, մշակել էր Կարաուլովը, որը և ընդունվել էր Պրժեվալսկիի կողմից։

(«Рус. Сл.»)

ԴԱՐԴԱՆԷԼԸ ԵՒ ԻՐ ՌԱԶՄԱԿԱՆ ԱԶԴԵՑՈՒԹԻՒՆԸ

—

Ներկայ բոպէներուն Դարդանէլի և Գալլիպոլիի ամբողջ շրջակայքը տեղի ունեցած օւժգին ռմբակոծութիւնը հասած է այն կէտին, երբ վճռապէս կարելի է յայտնել ընդհանուր ազդեցութիւնը քաղաքական և հոգիբանական տեսակէտով ամբողջ ռազմական Եւրոպայի վրայ։ Երբ Գերմանաարդ կոչուած թիւրքերը յիմարաբար ինքզինքնին ենթարկեցին գերմանական ազդեցութեան, անանք անհեռատեսութեամբ օսմ. դահին բաղդը նետեցին նժարին մէջ։

Ասկէ աւելի Թիւրքիոյ վարիչները չխորհեցան նաև հետեւանքը պատերազմին, որ՝ ինչ որ ալ եղած ըլլայ՝ պիտի ենթարկէ Թիւրքիան այս կամ այն կողմին ընդհանուր ազդեցութեան։ Էնվէր-փաշայի դահլիճը սին յոյսերով զէթ փրկելու համար Թիւրքիոյ բարոյական վարկը, որ երբէք գոյութիւն ունեցած չէ, պատերազմ յայտարարեց։ Եւ եթէ յաղթականները կարելի ըլլայ լոկ Թուրքի վրայ շահուած նկատել, Թիւրքիան ամենաերջանիկ և բաղդաւոր երկիրը կարելի պիտի լինէր համարիլ պատմութեանց մէջ։

Թիւրքերը Թուրքի վրայ շարունակ յաղթած են իրենց հակառակորդները ամենուրեք. Թուրքի վրայ անոնք տակաւին Վան քաղաքի տէրն են, Թուրքի վրայ իրենց բանակները Սուէզի ջրանցքին անցած՝ առանց դիմադրութեան Կահիրէն գրաւած և բուրգերուն տիրապետած են. Թուրքի վրայ անոնք ջախջախած են անգլիական բանակը Միջագետքի մէջ և մնացածները փախուստի դարձուցած են մինչև շոգենաւերը. Թուրքի վրայ ամբողջ աշխարհի մահմեդականները Աղանիստանէն մինչև Սուդան ու Հնդկաստան գլուխ բարձրացուցած են անգլիական տիրապետութեան դէմ և յաղթողը կը հանդիսանան. Թուրքի վրայ՝ մանաւանդ իրենց գերազանց թնդանօթները լուութեան դատապարտած են «Կուին Մէրիի», «Լայէնի» և «Լաֆայէթի» պէս հսկայական մարտանաւերու հրետանիները Դարդանէլի առջև, իսկ Գալիպոլը բոլորովին ապառով վիճակի մէջ է, հաշուի բնաւ չառնելով դաշնակիցներու գործող բանակը Գալիպոլիի շրջանի մէջ։

Հակառակ այս փաստերուն, որ Թիւրք մայրութեան յատուկ է, իրողութիւնն այն է, որ Union Jack-ը տարուին յաղթական կը ծածանի Եգիպտոսի մէջ, և Հնդկաստանի իշխանազունները կը ծառայեն անոր Ֆրանսայի և Ֆլանդրի պատերազմներու մէջ։ Նոյնպէս, հակառակ Թիւրքական շինծու լուրերուն, այսօր ռուսական յաղթական զօրքը կը յառաջանայ Թիւրքաց Հայաստանի խորերը տիրականօրէն։

Ամեն անանք, որանք կը յիշեն, թէ Թիւրքերը ինչպէս յաղթող եղան Թուրքի վրայ բալկանեան դաշնակիցներու դէմ մօտաւորապէս 4 տարի առաջ, ընաւ կասկածելու պէտք չունին, թէ Թիւրքիան օրէնքի ժամանակ կարող պիտի ըլլայ դիմադրելու։

Իսկ ինչ օր կը վերաբերի Դարդանէլի, այդ կարելի է մասնաւոր նկատողութեան առնել. և ճիշդ հոս է որ կրնանք կշռել Թիւրք մտայնութեան գերման ռազմական օյժին կողմը յաղթելուն գաղանիքը։ Էնվէր-փաշան Գերմանիոյ մէջ մեծցած և իր զինուորական կրթութիւնը հոն ստացած երիտասարդ անձնաւորութիւն մը ըլլալով և իբր ընդհանուր զեկավար Թիւրք բանակին՝ բնականաբար չէր կրնար իր համամտութիւնը չյայտնել Վիլհէլմին, որ այնքան շոյած էր զայն, ցոյց տալով անոր Դարդանէլին նշանակութիւնը, որ կրնար Թիւրքիոյ փառքը և պարծանքը լինել։ Կրնան թէ Բերլինի աղջիկներն ալ մասնաւոր թելադրութեամբ քիչ դեր չխաղացին Էնվէրին մօտ, երբ սա վերջին առթիւ Գերմանիա կը գրանուէր։ Այս հանանականութիւնը ինքնին այնքան կը պատշաճի էնվէրական փառասիրութեան, որ նա տարուած արարական գիշերներու հէքիաթներու պատանքներով՝ իր ամբողջ ազդեցութիւնը գործածեց ի նպաստ Գերմանիոյ։ Անշուշտ մէկը, որ չգիտէ դիւանագիտական այն կնճռոտ խնդիրը, որ շարունակ Թիւրքիան կուսախնձոր դարձած է երկար տարիներէ ի վեր, չպիտի կրնայ ըմբռնել Դարդանէլի նշանակութիւնը ռազմական տեսակէտով. բայց պիտի չվարանէր մեզ հետ ընդունելու, թէ երիտասարդ, թէ ծիր Թիւրք վարիչները ապառով կը զգային ինքզինքնին անգլիական և ֆրանսական նաւատորմիղին, որ պիտի չփորձէր առանց ծանր վտանգի Դարդանէլին մօտենալ, երբ նա արդէն իր պատնէշներուն վրայ կը կրէր Կրուպպի մեծ թնդանօթները։ Գիտենք, թէ քարտէզները լաւ են իրենց նշանակութեան տեսակէտով. բայց օչ մէկ քարտէզ իսկապէս կը ներկայացնէ նեղուցի մը ամբութեանց ներքին օյժը, որ այսօր գոյութիւն ունի։ Վերջին մէկ տարուայ ընթացքին, ֆոն դէր Գոլցի և Լիմբն ֆոն Սանդէրսի շարունակական ներկայութիւնը Կ. Պոլսի և Դարդանէլի մէջ մանաւանդ պատերազմէն յետոյ տարօրինակ պիտի թուի, եթէ ենթադրենք, որ անոնք անգործ նստած էին և ընաւ չէին մտածեր Դարդանէլը զօրացնելու մասին, որը ինքնին բնական դիրքով անառիկ էր։ Ինչ եղանակով ալ որ տեղի ունենայ դաշնակից նաւատորմիղին գործողութիւնները Դարդանէլին դէմ, այսու ամենայնիւ յանդուգն հեռատեսութեամբ կը դեկավարուի նաւ։ Ամեն պարագայի տակ լրագրութեան գաղտնի կը մնան Դարդանէլի շուրջ տեղի ունեցած խիզախ կռիւները. նոյնպէս կարելի պիտի չըլլար նեղուցին ամրութիւնները հեշտութեամբ լքուութեան դատապարտել մարտանաւերով, առանց ցամաքային բանակի մը օժանդակութեան։ Իսկ այն զօրագունդը, որ յառաջ կը քաշէ Գալիպոլիի թերակղզին մէջ, Դարդանէլին քովը ի վեր, կը դեկավարուի անուանի զօրական գեներալ Դամադի առաջնորդութեամբ, որ այնքան փայլուն համբաւ շինած է Մարոկքոյի մէջ։ Ինչպէս Բիւլէրի և Սադիլ-Բահրի թնդանօթները այժմ լուութեան դատապարտուած են, անոնց քոյր մարտակոցները նոյն բաղդին պիտի արժանանան այս անգամ կռնակէն Ֆրանսա-անգլիական զօրագնդին բազկի օյժով։ Ամեն պարագայի տակ՝ զինուորական շրջանակի մէջ մեծագոյն հետաքրքրութիւն մը Գալիպոլիայէն յետոյ դարձած է Դարդանէլի շուրջ, որը իր վերջնական ճակատագրին հասնելու օրհասականը կապրի, իսկ Պոլսոյ կը մնայ իր վերջին ժամերը տեսնել իբր օսմանեան մայրաքաղաք։ Ռազմական այն գործողութիւնները, որք կը կատարուին իսկապէս Սարօսի ծոցին շուրջ այս պահուն, Եըլդըզի փաղիշահին համար հոգեվարքի ազդանշանը կուտան. իսկ այն բոպէին, երբ անգլո-ֆրանսական ծովային և ցամաքային զինուորները Դարդանէլէն անցնելով Սամարոլի առջև կանգ առնեն, Թիւրք բանակը յուսալքուած հաշտութիւն պիտի խնդրէ, դաժան շնորհակալութիւն յայտնելով Վիլհելմ-էնվէրը զոյգին։ Բայց Դարդանէլը կըրկին կը պահէ իր նշանակութիւնը։

Գիսակ

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄ

—o—

ՌՈՒՍ-ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԵՒ ՌՈՒՍ-ԱՒՍՏՐԻԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ

(Պետ. Հեռ. Գործ.)
1 յունիսի

ՊԵՏՐՈԳՐԱԴ. — Պաշտօնական։ Գերագոյն Զօրահրամանատարի շտաբի կողմից.

Վինդալա գետի վրա մայիսի 23-ին մենք վանեցինք՝ հակառակորդի համար մեծ կորուստներով՝ նրա խոշոր օյժերի կրկնակի փորձերը՝ անցնելու Լեացկով շէնի շրջանում. Նաև կանգնեցվեց թշնամու զօրամասերի առաջխաղացումը Վինդալան անցնելու ժամանակ՝ յիշեալ կէտից ներքև։ Շավլէլի մօտի դիրքի համար սկսված կռիւը շարունակվում է փոփոխական աջողութեամբ։ Շավլէ քաղաքը ռմբակոծվեց ծանր թնդանօթներից։ Նէմանի և Նարէվի զօրաճակատներում և Վիսլայի ձախ ափում թշնամին չը զարգացրեց իր ըսկսած յարձակումները։ Պրասնիշից դէպի հիւսիս եռանդուն հակայարձակումով մեր հետիոտն գնդերը մայիսի 31-ին տիրեցին համարեա բոլոր առաջնագիծ խրամատներին, որ նախօրէին գրաւել էր հակառակորդը։

Գալիցիայում մայիսի 30-ի և 31-ի ընթացքում նորից սկսվեց ճակատամարտ Պիսկորովիցէի մօտից մինչև Մօսցիսկի։ Թշնամին խիտ զօրասիւներով յարձակումներ էր գործում Լիւբաչէվկա զօրաճակատում, որի ստորին հոսանքով աջողվեց նրան անցնել, նաև Լիւբաչէվկի և Վիշնի միջև, ուր նա ձեռք ձգեց Տուխլա գիւղը։ Դնէստրի վրա թշնամին լոյս մայիսի 31-ի գիշերը և հետեւեալ օրը յամառութեամբ, բայց ապարդիւն, յարձակվում էր մեր կամրջամերձ դիրքի վրա Նիտնիէվ գիւղի մօտ։ Դնէստրի ձախ ափում՝ Զոժավա-Զալէշչիկի զօրաճակատում մայիսի 30-ին տեղի ունեցաւ խիզախ հակայարձակում, որի ընթացքում համարեա գլխովին սրախողխող և ցիրուցան եղան տիրօլեան մի քանի ժողովրդական զօրախմբեր և 20-րդ եղէբեան գումարտակը։ Հետեւեալ օրը միևնոյն շրջանում մեր կամաւորների գունդը, դիմելով ուրիշ զօրամասերի աջակցութեամբ հակայարձակման, գերեց 400 զինուոր և 8 օֆիցէր։

ՖՐԱՆՍ-ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԵՒ ԱՆԳԼՈ-ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ

(Պետ. Հեռ. Գործ.)
1 յունիսի

ՊԱՐԻԶ.—Պաշտօնական երեկոյեան հաղորդագրութիւն։

Արրասից դէպի հիւսիս ընկած ռազմաճակատում կատաղի թնդանօթային կռիւ է։ Կէսօրից յետոյ մենք յարձակում գործեցինք Սուշէի շաքարի գործարանի հիւսիսային մասում ընկած լեռնաշղթայի վրա։ Լեռնաշղթան, որ թշնամին ամրացրել էր ռաստիկ, ընկաւ մեր ձեռքը։

Մեր հետիոտն գնդերը, յարձակում գործելով, ձեռք ձգեցին թշնամու երեք զօրագիծ և գերեցին աւելի քան 100 հոգի։ Գերիների պատմելով, վերջին օրերի կռիւներում մենք շատ խիստ կորուստ ենք պատճառել գերմանական զօրքերին։

Պիղէում մեր թնդանօթային կրակն առաջ բերեց մի քանի պայթում, որոնց հետեւեցին հրդեհներ և սարսափ։

Սուասսոնի վրա թշնամին սկսեց թնդանօթաձգութիւն, արձակելով ընդամենը 120 ռումբ։

ԱԻՍՏՐՕ-ԻՏԱԼԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ

(Պետ. Հեռ. Գործ.)
1 յունիսի

ՀՌՕՄ.—Իտալական գլխաւոր բանակի պաշտօնական հաղորդագրութիւն.

Տիրոլ-արէնտինեան սահմանի երկաթուղիները շարունակվում են մանը ընդհարումներ մեր առաջապահ զօրախմբերի և թշնամու զօրքերի միջև, որոնք աստիճանաբար ետ են քաշվում։ Մեր թնդանօթները շարունակում են աւերել թշնամու դիրքերը։

Կարնիայում մեր ալպիական զօրքերը գրաւեցին Վոլէ լեռնաշղթան, գերելով 25 հոգի։

Իզոնցոյի միջին հոսանքում մեր զօրամասերը լոյս մայիսի 28-ի գիշերը անցան գետի ձախ ափը՝ Պլավի մօտ, հանդիպելով թշնամու յամառ դիմադրութեան, որը այնուամենայնիւ ստիպված էր նահանջել մեր արի յարձակումներից, թողնելով կռուի դաշտում շատ դիակներ։ Բացի դրանից մենք ձեռք ձգեցինք 200 գերի։ Թշնամու բոլոր հակայարձակումները վանվեցին։

Գրէնիում մինչև ծովը մեր քաջ օդագնացները վարպետութեամբ և արիութեամբ շարունակեցին կատարել հետախուզումներ։

ԾՈՎԻ ՎՐԱ

(Պետ. Հեռ. Գործ.)
1 յունիսի

ԼՕՆԴՕՆ.—Մի ձկնորսանաւ Միշֆօրդեվինէում ափ հանեց «Կրաուն-օփ-ինդիան» և նորվեգիական «Բէլլգրադ» շոգենաւի նաւաստիներին, որպիսի նաւերին ջրասուզել է գերմանական սուզանաւը Սէֆտանեզդի մօտ։

ՀԱՄԱԵՒՐՈՊԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՇՈՒՐՋԸ

(Պետ. Հեռ. Գործ.)
1 յունիսի

ԼՕՆԴՕՆ. — Լլոյդ-Ջորջի ձեռնարկած ճանապարհորդութիւնը արդիւնաբերական կենտրոններում ստանում է շքերթի բնոյթ։ Գործարանատէրերը և բանուորների ներկայացուցիչներն ամենուրեք հանդիպում են նրան, հարցնելով «ասացէք, ինչ է ձեզ հարկաւոր, և մենք կը տանք»։ Լլոյդ-Ջորջը եկաւ Բրիստոլ, ուր ազգաբնակութիւնը դիմաւորեց ցնծութեամբ։ Այստեղ Լլոյդ-Ջորջը արևմտեան Անգլիայի հարիւրաւոր քաղաքների ներկայացուցիչների մեծ միտինգում արտասանեց ճառ, որի մէջ ասաց. «Ինժիներները, տեխնիկները և բանուորները կարող են շահել ներկայ պատերազմում, եթէ նրանք մեզ հետ են։ յաղթութիւնը մօտ է։ Կիչենէրը արդէն կարգադրել է, որպէսզի յիսի 30-ին տեղի ունեցաւ խիզախ հակայարձակում, որի ընթացքում համարեա գլխովին սրախողխող և ցիրուցան եղան տիրօլեան մի քանի ժողովրդական զօրախմբեր և 20-րդ եղէբեան գումարտակը։ Հետեւեալ օրը միևնոյն շրջանում մեր կամաւորների գունդը, դիմելով ուրիշ զօրամասերի աջակցութեամբ հակայարձակման, գերեց 400 զինուոր և 8 օֆիցէր։

ՖՐԱՆՍ-ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԵՒ ԱՆԳԼՈ-ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ

(Պետ. Հեռ. Գործ.)
1 յունիսի

ՊԱՐԻԶ.—Պաշտօնական երեկոյեան հաղորդագրութիւն։

Արրասից դէպի հիւսիս ընկած ռազմաճակատում կատաղի թնդանօթային կռիւ է։ Կէսօրից յետոյ մենք յարձակում գործեցինք Սուշէի շաքարի գործարանի հիւսիսային մասում ընկած լեռնաշղթայի վրա։ Լեռնաշղթան, որ թշնամին ամրացրել էր ռաստիկ, ընկաւ մեր ձեռքը։

Մեր հետիոտն գնդերը, յարձակում գործելով, ձեռք ձգեցին թշնամու երեք զօրագիծ և գերեցին աւելի քան 100 հոգի։ Գերիների պատմելով, վերջին օրերի կռիւներում մենք շատ խիստ կորուստ ենք պատճառել գերմանական զօրքերին։

Պիղէում մեր թնդանօթային կրակն առաջ բերեց մի քանի պայթում, որոնց հետեւեցին հրդեհներ և սարսափ։

Սուասսոնի վրա թշնամին սկսեց թնդանօթաձգութիւն, արձակելով ընդամենը 120 ռումբ։

ԱԻՍՏՐՕ-ԻՏԱԼԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ

(Պետ. Հեռ. Գործ.)
1 յունիսի

ՀՌՕՄ.—Իտալական գլխաւոր բանակի պաշտօնական հաղորդագրութիւն.

Տիրոլ-արէնտինեան սահմանի երկաթուղիները շարունակվում են մանը ընդհարումներ մեր առաջապահ զօրախմբերի և թշնամու զօրքերի միջև, որոնք աստիճանաբար ետ են քաշվում։ Մեր թնդանօթները շարունակում են աւերել թշնամու դիրքերը։

Կարնիայում մեր ալպիական զօրքերը գրաւեցին Վոլէ լեռնաշղթան, գերելով 25 հոգի։

Իզոնցոյի միջին հոսանքում մեր զօրամասերը լոյս մայիսի 28-ի գիշերը անցան գետի ձախ ափը՝ Պլավի մօտ, հանդիպելով թշնամու յամառ դիմադրութեան, որը այնուամենայնիւ ստիպված էր նահանջել մեր արի յարձակումներից, թողնելով կռուի դաշտում շատ դիակներ։ Բացի դրանից մենք ձեռք ձգեցինք 200 գերի։ Թշնամու բոլոր հակայարձակումները վանվեցին։

Գրէնիում մինչև ծովը մեր քաջ օդագնացները վարպետութեամբ և արիութեամբ շարունակեցին կատարել հետախուզումներ։

ԾՈՎԻ ՎՐԱ

(Պետ. Հեռ. Գործ.)
1 յունիսի

ԼՕՆԴՕՆ.—Մի ձկնորսանաւ Միշֆօրդեվինէում ափ հանեց «Կրաուն-օփ-ինդիան» և նորվեգիական «Բէլլգրադ» շոգենաւի նաւաստիներին, որպիսի նաւերին ջրասուզել է գերմանական սուզանաւը Սէֆտանեզդի մօտ։

ՀԱՄԱԵՒՐՈՊԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՇՈՒՐՋԸ

(Պետ. Հեռ. Գործ.)
1 յունիսի

ԼՕՆԴՕՆ. — Լլոյդ-Ջորջի ձեռնարկած ճանապարհորդութիւնը արդիւնաբերական կենտրոններում ստանում է շքերթի բնոյթ։ Գործարանատէրերը և բանուորների ներկայացուցիչներն ամենուրեք հանդիպում են նրան, հարցնելով «ասացէք, ինչ է ձեզ հարկաւոր, և մենք կը տանք»։ Լլոյդ-Ջորջը եկաւ Բրիստոլ, ուր ազգաբնակութիւնը դիմաւորեց ցնծութեամբ։ Այստեղ Լլոյդ-Ջորջը արևմտեան Անգլիայի հարիւրաւոր քաղաքների ներկայացուցիչների մեծ միտինգում արտասանեց ճառ, որի մէջ ասաց. «Ինժիներները, տեխնիկները և բանուորները կարող են շահել ներկայ պատերազմում, եթէ նրանք մեզ հետ են։ յաղթութիւնը մօտ է։ Կիչենէրը արդէն կարգադրել է, որպէսզի

զօրքերում գտնվող բոլոր ինժինէրները և հմուտ տեխնիկները վերադառնան զօրաճամբարից և զբաղվեն ռազմամթերքներ պատրաստելով։ Այժմ չը կան կուսակցական բանակցութիւններ։ Մենք ամենքս համոզված ենք, որ մեր երկիրը կուռում է արդար գործի համար։ Ով կուռում է ճշմարտութեան համար, նա պէտք է յաղթէ։ Ես կը կամենայի, որպէսզի մեր զօրքերը, կուի գնալով, զգային, թէ նրանց պաշտպան են կանգնած ամենքը։ Գերմանացիք աջողութիւնների հասան առատ ռազմանիւթերով։ Եթէ մենք ևս վարվենք այդպէս, դուք շուտով կը լսէք, թէ ինչպէս բրիտանական ռումբերի տակ կը խորտակվեն գերմանական պատնէշները»։

ՍՕՖԻԱ.—Բոլգարական հեռագրական գործակալութիւնը կտրուկ կերպով հերքում է այն տեղեկութիւնը, թէ գերմանական երկու սուզանաւ անց են կացրել Բոլգարիայի վրայով իբրև երկաթուղային իրեր և ջուրն են լցնցրել բոլգարական նաւահանգստում։

Միևնոյն գործակալութիւնը հերքում է այն տեղեկութիւնը, թէ մակեդոնական կոմիտէի նախագահը մեկնել է Կ. Պոլիս յանձնելու թիւրքերին 25000 ռումբ և որ 1800 գերմանացի օֆիցէր անցել են Բոլգարիայի վրայով Կ. Պոլիս։

ԱԹԷՆՔ.— Սկսվեցին պարլամենտի ընտրութիւնները ամբողջ թագաւորութեան մէջ, բացի Մակեդոնիայի և Կրէտէի մի քանի շրջաններից, ուր ընտրութիւնները յետաձգվեցին ձեռական պատճառներով։ Աթէնքում ընտրութիւնները ընթանում են հանդիստ։ Վենիզէլոսի կուսակցութիւնը ըստ երևոյթին յաղթում է։ Պ. Հ. Գ. Թըղթակիցը շրջեց ընտրողական կենտրոնական թաղամասերը. մինչև այժմ անցել են Վենիզելոսի կողմնակիցների 65%-ը։ Գաւառում նոյնպէս յաղթութիւնը Վենիզելոսի կողմն է։ Լաւատեղեակ շրջաններում պնդում են, որ, անկախ ընտրութիւնների հետևանքից, ներկայ կաբինէտը կը մնայ իշխանութեան գլուխ մինչև թագաւորի առողջանալը։

Թագաւորի առողջական դրութիւնը անորոշ է։

Զինուորագրիք գրաւել են Բոյանի աջ ափը և նրա շրջակայքը և առաջանում են դէպի Սկուտարի։

ՍՕԼՈՒՆ.— Միլիէնից տեղեկացնում են, որ անգլիական նաւատորմը մայիսի 30-ին երևան է հանել բէնզինի մեծ պահեստ Այվալիի մօտի նաւահանգստում։

ՆԻՒ-ԵՕՐԿ.— Դէրնբուրգը մեկնեց Գերմանիա։

ՊԱՐՍԿԱՍՏԱՆՈՒՄ

(Պետ. Հեռ. Գործ.)

1 յունիսի

ՍՊԱՀԱՆ.— Պաշտօնակ արված գեներալ-նահանգապետի մօտ կայացաւ բախտաւորների, հոգևորականութեան և վաճառականութեան ժողովը, որ որոշեց՝ այն դէպքում, եթէ գեներալ-նահանգապետի պաշտօնում բախտաւոր չը նշանակվի, ցոյց տալ կառավարութեանը զինված դիմադրութիւն։ Բախտաւորները հաւաքում են ձիաւորներ և բանակցում են գերմանացիների հետ։

ՊԱՏԵՐԱԶՄԻ ՇՈՒՐՋԸ

— Իտալացիք գտնվում են Տրիէստից 30 վերստ հեռաւորութեան վրա։

— Կոպէնհագէնից հաղորդում են, որ Գերմանիայում և Աւստրիայում ուսուցիչների և հրդեհաշէջների պաշտօնները կատարում են կանայք։

— Գերմանացիք հնարել են վառվող գընդակներ, որոնք սոսկալի տանջանքներ են պատճառում։

— Իրլանդական նացիոնալիստները և արմատական բանուորները դէմ են զինուորական պարտադիր ծառայութիւն մացնելուն։

— Գինդենբուրգը կարգադրել է հրացանի բռնել գերմանացիների գրաւած նահանգներում այն ռուսներին, որոնց մօտ կը գտնվեն զէնքեր։

— Իտալացի զօրքերի արշաւանքներին մասնակցում է նաև թագաւորը։

— Էսադ-փաշան համաձայնութիւն է կապել Դուրացցոն գրաւած սերբերի հետ։

— Մոսկվայի լրագիրները հաղորդում են. «Մոսկվայի նահանգապետը կարգադրել է արգելել ամեն տեսակ ցոյցերը»։

— Մոսկվայի նահանգապետի վերջին կարգադրութեամբ, քաղաքացիներին թոյլատրվում է մնալ փողոցներում մինչև կէս գիշեր։

— Մոսկվայի միտրոպոլիտը մի կոչով դիմում է ազգաբնակութեան, որի մէջ ասում է ի միջի այլոց. «Ցաւալի, արտասովոր չափ ողբալի է այն, ինչ որ պատահեց մեր քաղաքում։ Անցէք և տեսէք՝ ինչ է կատարվել։ ասես օրագան էր, որ անցաւ փողոցներով, այլանդակեց, աւերեց դռներ, ջարդեց պատուհաններ, ամեն ինչ տակն ու վրա արաւ, կործանեց։ Ինչպիսի՜ ցնծութիւն է թշնամիների համար, որոնք կարող են դրսնում տեսնել ներքին վէճ ու երկպառակութիւնների սկիզբ...»։

— Մոսկվա եկաւ արդարադատութեան մինիստր Շչէգլովիտովը։ Սկսվել է քննութիւն անկարգութիւնների գործի առիթով, որպիսին յանձնված է առանձին կարևոր քննիչին։ Մինիստրին զեկուցում արին։ Միևնոյն օրը նա մեկնեց Զերնիգովի նահանգը։ Ներքին գործերի մինիստրի օգնական Զուևկովսկին մեկնեց Պետրոգրադ։

— Ամերիկան խաղաղ ոգեկան նաւատորմը մեկնել է անյայտ ուղղութեամբ։ Այդ առիթով Բերլինում տիրում է մեծ յուզմունք։ Լրագիրները խորհուրդ են տալիս կառավարութեանը զինվել։

— Ցարսկոյէ-Սէլօ են մեկնել մինիստրները և Պետական Դումայի նախագահ Ռոձեանկոն՝ Մոսկվայում տեղի ունեցած դէպքերի առիթով։

— Պապի նախաձեռնութեամբ Շվէյցարիան համաձայն է իրաւունք տալ ամեն մի կուռող երկրին ուղարկել 10,000 վիրաւոր զօրական՝ շվէյցարական լեռներում բժշկվելու համար։

— Մոսկվայի և Կովկասի միջև հաստատվում է սառցային գնացքների երթևեկութիւն միրգ ու մրգ փոխադրելու համար։

— Բէլգիայում գերմանացիք զօրքերի նոր տեղափոխութիւններ են կատարում, պատրաստվելով ըստ երևոյթին նոր մեծ արշաւանքի։

— Գերմանացիների յոյսը՝ առնելու Լվով քաղաքը, ըստ երևոյթին ի դերև է ելնում ռուսների տարած յաղթութիւնից յետոյ։ Ներկայումս այդ շրջանում պատերազմական դրութիւնը դասաւորվում է յօգուտ ռուսների։

— Սոֆիայում վերսկսել են հրատարակութիւնը ռուսասէր փակված երեք օրաթերթերը։

ԲԱՆԱՄԻՐԱԿԱՆ

ՊԱՏԵՐԱԶՄՆ ՈՒ ՊԵՏՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՇԱՀԸ ԹԻՒՐԲԻԱՑՈՒՄ *)

VI

Ժամանակակից Եւրոպայի արդիւնաբերական ընոյթը ակնյայտնի կերպով տարբերվում է նրա անցեալ շրջանից. այդ տարբերութիւնը հետևանք է Եւրոպայի արդիւնաբերութեան ծոցում առաջացած փոփոխութեան, որը ամենից առաջ տեղի ունեցաւ Անգլիայում և յետոյ միայն Եւրոպայի միւս երկրամասերում ու Ամերիկայում. այսպէս օրինակ 1760-ական թուերից սկսած՝ արդիւնագործական յեղափոխութեան մէջ յաղթանակող հանդիսացաւ Անգլիան. վերջինս 1800-ական թուերին դուրս քշեց «երկաթի արդիւնագործութիւնից Շվեդիային ու Ֆրանսիային, իսկ մանածագործութեան մէջ Հնդկաստանին»... «1850 թուականին Անգլիան մի այնպիսի դրութեան հասաւ, որի նմանը մենք չը գիտենք. որպէս ծովային առևտրի կենտրոն նա միաժամանակ մի կենտրոնատեղի էր մետաղագործական արդիւնագործութեան. եւրոպական ինդուստրիայի գլխաւոր ֆոկուսն ու երկրագնդի զեկավարն ու տեն տուող բանկիրը» (Бруксъ Адамсъ, «Нов. держ.», եր. 175)։

Երկաթի գործածութիւնը նրա բազմաթիւ ձևերով և քարածուխի արտադրութիւնը ժամանակակից Եւրոպայի արդիւնաբերութեան զարգացման և այժի հիմնական տարրն է կազմում. այդ բանը ամենից առաջ կռահեց Անգլիան և բոլորից առաջ էլ կենտրոնացրեց նա իր արտադրական ոյժերը արդիւնագործութեան այդ ճիւղերում. «1866 թուականին ամբողջ աշխարհում արտադրած հում մետաղի 48,7%-ը Անգլիան էր արտադրում» (Бр. Ад., «Нов. держ.,» եր. 179). իսկ 1880—1897 թուը, ճիշդ այն ժամանակ, երբ բամբակի, վուշի, մետաքսի և բրդե գործուածքների արտահանութիւնը «նուազեց 243 միլ. մարկով, մետաղէ գործիքների արտահանութիւնը աճեց 111 միլ. մարկով, իսկ քարածուխի արտահանութիւնը 165 միլ. մարկով, որոնք միասին 276 միլ. յաւելում են կազմում, ընդհանուր արտահանութիւնը յիշեալ ժամանակամիջոցում 4461,2 միլ. մարկից հասաւ 4684,3 միլիոնի, այն է՝ 223,1 միլ. մարկի աճումն» (К. К. торг. догов., եր. 68). պարզ է, որ մետաղի արդիւնագործութիւնը Անգլիայի արդիւնաբերութեան գլխաւոր և հիմնական ճիւղն է կազմում, իսկ քարածուխի արտադրութիւնը այդ արդիւնագործութեան հացը։ Անգլիայից յետոյ գալիս է Գերմանիան, որը թէև ուշ, բայց նրա մետաղագործական արդիւնագործութիւնը աւելի քան զարգացաւ։ Գերմանիան ներկայումս մետաղագործութեան մէջ Եւրոպայում առաջին տեղն է գրաւում, որի հետ եւրոպական ոչ մի պետութիւն ոտք մեկնել չի կարող. «1890—1899 թ. բրդէ և մաղէ գործուածքների արտադրութիւնն ընկաւ 89,7 միլիոն մարկով, երբ մեքենաների ու գործիքների արտադրութիւնը աճեց 102,4 միլ. մարկով, մետաղագործական ինդուստրիայի կիսաֆաբրիկանները 712 միլ. մարկով, իսկ ֆաբրիկանները 107,3 միլ. մարկով» (К. К. торг. дог., եր. 68)։ Եւրոպական արդիւնաբերութեան այս ձրգտումը որոշ կոնկրէտ ձև ստացաւ նրանց մաքսային տարիֆի մէջ. եւրոպական պետութիւնները իրանց մաքսային քաղաքականութեան մէջ ղեկավարվում են այժմ որոշ քաղաքականութեամբ, որը առաւելութիւններ է ստեղծում մետաղագործութեան համար, և մենք տեսնում ենք, որ Բրիտանական Հնդկաստանում երկաթի ու երկաթէ գործուածքների վրա դրված է 1% մաքս, իսկ միւս արդիւնաբերական ճիւղերի արդիւնքների վրա 2%—3% և աւելի մաքս։

Այն ժամանակ, երբ Եւրոպան յագեցած կապիտալով՝ տեղ չէր գտնում մետրոպոլիայում տեղաւորելու այն, իր հայեացքը դարձրեց նա դէպի գաղութները. բնականաբար Եւրոպայի առաջ դրվել էր մի հարց՝ փոխել գաղութային քաղաքականութեան կուրսը։ Հարկաւոր էր գաղութներում ստեղծել քաղաքական ու սոցիալական ընոյթ ունեցող պայմաններ, իր դանձած միջոցների ամենալաւ ու աջող կիրառման համար։ Այդ է պատճառը, որ գաղութային քաղաքականութեան մէջ՝ Անգլիան Հնդկաստանում և իր այլ կայուածներում սահմանադրական հոգատարութեամբ է հանդէս գալիս։ Հնդկական ինքնավարութեան սկզբունքը մենք տեսնում ենք առաջին անգամ արծարծում է անգլո-հնդկական «The East India Association» առևտրական ընկերութիւնը, որը շատ մօտ է կանգնած անգլիական կառավարութեան օրէնս։ Եւ մենք տեսնում ենք, որ քաղաքական այդ զատութիւններից յետոյ անգլիական կապիտալը մեծ կիրառումն ստացաւ Հնդկաստանում, կազմակերպելով հնդկական-տեղական արդիւնագործութիւնը։ Քաղաքական ու տնտեսական ընոյթ կրող այս յեղաշրջումից յետոյ Եւրոպան պահել է իր մենաշնորհեալ դիրքը մետաղագործական արդիւնագործութեան մէջ, որը հիմք է այն քաղաքականութեան, որ վարում է մետրոպոլիան գաղութների վերաբերմամբ, որի համապատասխան յարմարվում են գաղութները մայր երկրին։ Մենք տեսնում ենք, որ յետամնաց պետութիւններն ու երկրամասերը մետաղագործական Եւրոպայի համար անյատակ շուկաներ են։ Ասիայի ու Աֆրիկայի ապագայ երկաթուղիները, հեռագիրը, գործարանները ու էլեքտրաքարշերը պէտք է եւրոպական կապիտալով ու եւրոպական մեքենաներով կառուցվեն։ Ահա թէ որտեղ պիտի փնտռել եւրոպական պետութիւնների գաղութային քաղաքականութեան հիմքը, որը միանգամայն պարզ է կրցուցանում, թէ ինչու պետութիւնները աֆրիկական անապատի համար կռւում են։

Պատկերը լրացնելու համար բերում ենք մի շարք տուեալներ, որոնք ոչ մի կասկած չեն թողնում այլևս Եւրոպայի տնտեսական քաղաքականութիւնը պարզ պատկերացնելու։ Ըստ Պավլովիչի՝ 1860 թուին ամբողջ աշխարհում հալեցված թուլը 7 միլիոն տոն էր, իսկ 1910 թուին 70 միլ. տոն էր։ Տասն տարի յետոյ՝ 1870 թուին 12 միլիոն տոն էր, 1880 թուին 20 միլ. տոն, 1890 թուին 30 միլ. տոն, 1900 թուին 40 միլ. տոն։ Մետաղագործական մեծ պետութիւնները ըստ իրանց մետաղարտադրութեան հետևեալ կարգով են հանդէս գալիս. 1860 թուին Մեծ-Բրիտանիան արտադրում է 3.500,000 տոն մետաղ, Ֆրանսիան 1.000,000 տոն, Միացեալ-Պետութիւնները 800,000 տոն, Գերմանիան 700,000 տոն, Բէլգիան 300,000 տոն, Ռուսաստանը 250,000 տոն, Աւստրո-Ունգարիան 200,000 տոն. 1870 թուին Մեծ-Բրիտանիան արտադրում է 6.050,000 տոն, Միացեալ-Պետութիւնները 1.700,000 տոն, Գերմանիան 1.400,000 տոն, Ֆրանսիան 1.200,000 տոն, Բէլգիան 630,000 տոն, Աւստրո-Ունգարիան 350,000 տոն, Ռուսաստանը 300,000 տոն։ 1890 թուին նորից փոխվում է նրանց յաջորդականութեան կարգը. Միացեալ-Պետութիւնները գրաւում են առաջին տեղը 9 միլիոն թուլի արտադրութեամբ. անգլիական թուլի արտադրութիւնը 80-ական թուականներից այս կողմ չի առաջադիմում, այն ինչ գերմանականը աճում է հսկայական չափերով. 1880-ական թուականներից մինչև 1900 թուականը Գերմանիան իր թուլի արտադրութեամբ անցնում է Անգլիայից, այնպէս որ 1910 թուականին պետութիւնների մասնակցութիւնը թուլի արտադրութեան մէջ հետևեալ կերպով է արտայայտվում. Միացեալ-Պետութիւնները արտադրում են 27 միլիոն տոն, Գերմանիան 14 միլ. տոն, Մեծ-Բրիտանիան 10 միլ. տոն, Ֆրանսիան 4 միլիոն տոն, Ռուսաստանը 3 միլ. տոն, Աւստրո-Ունգարիան 2.100,000 տոն, Բէլգիան 1.800,000 տոն։ Այսպէսով Գերմանիան է որ արդիւնագործական այդ ճիւղի մէջ իշխում է Եւրոպայում. նա միայնակ այնքան է արտադրում, որքան որ միասին Անգլիան ու Ֆրանսիան։

Ինչպէս Բրուկս Ադամն է ասում, մի սերունդ սրանից առաջ Անգլիան գնում էր ամերիկեան բամբակի $^2/_3$ մասը, այժմ նա $^1/_4$ էլ չէ գնում, իսկ նրա հում մետաղի արտադրութիւնը 1910 թուին կազմում է մետաղի համաշխարհային արտադրութեան 19,3%-ը։

Ահա թէ ինչով պիտի բացատրել պետութիւնների այն տենդային կռիւը, որ մղվում է աֆրիկական սև ցամաքի և ասիական պետութիւնների մէջ կօնցէսիաների շուրջը։ Պետութիւնները իրանց երկաթուղիների ցանցով, հեռագրի և էլեքտրականի էնէրգիայով՝ եւրոպական արդիւնագործութեան համար ստեղծում են միլիարդների գործ, ենթարկելով այդ յետամնաց երկիրների քաղաքական ու տնտեսական կեանքը Եւրոպային. նրանք միաժամանակ ստեղծում են այդ երկիրներում իրանց համար քաղաքական ազդեցութեան շրջաններ, յարմարեցնելով գաղութներին ամենաշատ իրանց հայրենի արդիւնաբերութեան՝ ստանալով նրանցից հարկաւոր հում նիւթ և սպառելով այնտեղ հայրենի արդիւնագործութեան արդիւնքները։

Ալ. Մել.-Աղաջ.

*) Տես «Մշակ» № 117.

— Պարօգրադի շրջանի զինուորական պետը ազդարարելով, որ թշնամի հպատակների գործարանները գտնվում են լիակատար հսկողութեան ներքոյ, և ոչ մի կոպէկը չէ գնում թշնամիներին, յորդորում է բոլորին պահպանել լիակատար հանգստութիւն։ Հեռախօսով խօսել թոյլատրվում է միմիայն ռուսերէն։

— Պաշտօնական տուեալների համաձայն, յունիսի 1-ին Մոսկվայում փակվելու էին 193 թշնամի ձեռնարկութիւններ, որոնք ունեն աւելի քան 300 խանութ։ 40 ֆիրմաների արգելված է պահել նախկին անունները և կարգադրված է փոխարինել նոր անուններով։

ԻՏԱԼԻԱՆ ԵՒ ԻՐ ԵՐԷԿՎԱՑ ԴԱՇՆԱԿԻՑՆԵՐԸ

(Հակամարտութեան թաղնված տենդենցների մերկացում)

I

Կանգնած ենք քաղաքական նշանակալից մետամորֆոզի առաջ. Իտալիան ոչ միայն ետ կանգնեց իր երէկվայ դաշնակիցների—Աւստրիայի և Գերմանիայի—ագրեսիվ արշաւանքներից դէպի հարաւ, արևելք ու արևմուտք, այլ և պատերազմի 10-րդ ամսում միացաւ իր էքս-դաշնակիցների օրէնքի թշնամիների բանակին։

Երևոյթը խոշոր է և պահանջում է իր հանգամանօրէն վերլուծումը. նա այժմէական լինելով հանդերձ՝ կազմում է պատմական այն կարևորագոյն էջերից մէկը, որ ընդունակ պիտի լինի դարձակէտ համարվելու յետագայ քաղաքական յարաբերութիւնների նորակերպ դասաւորութեան մէջ։

Նրանք, որոնք քաղաքական երևոյթները և պետական ակտերը զանազան կրօնական, ազգային, բարոյական կամ մտաւոր-հոգեոր շահերի տեսակէտներից են լուսաբանել ջանում, նրանց համար միանգամայն անհասկանալի է լատինական և գերմանական ցեղերին պատկանող, կաթոլիկական և բողոքական դաւանանքներ ընդունող պետութիւնների դաշնակցութիւնը։ Ուստիւ այդպիսիների կարծիքով, 1883 թուականին առաջացած եռապետական դաշնակցութիւնը (Գերմանիայի, Աւստրիայի և Իտալիայի միջև) մի կատարեալ Missgeburt էր, մի անաջողակ զաւակ Իտալիայի համար։ Բայց կան այնպիսի միապետներ ևս՝ այսպէս անուանված գերմանոֆիլների շարքերում, որոնք բարոյական տեսակէտով նայելով իրերի ընթացքին՝ զատապարտելի են գտնում Իտալիայի վարմունքը. նրա և՝ չէզոքութիւնը և՝ մանաւանդ մասնակցութիւնը հակագերմանական կօալիցիայի՝ համարում են բարոյական դաւաճանութիւն իր վաղեմի դաշնակիցների դէմ։

Մի և միւս կարգի դատողութիւնը նոյնքան մակերեսային է, որքան և անմիտ, հետևապէս նշանակազուրկ։

Իտալիան նոյնքան շահագրգռված է եղել 32 տարի առաջ դաշնագրով համերաշխեցնելու իր պետական քաղաքականութիւնը աւստրիականին ու գերմանականին, որքան նա կատարեալ իրաւունք և շօշափելի հիմքեր ունէր ներկայիս խզելու իր դաշնագրային կապը և յարելու պետութիւնների այլ խմբակցութեան։ Երևոյթների առաջացման և յարաբերութիւնների դասաւորութեան օբեկտիվ վերլուծութիւնը չի պահանջում պատմական ուղղագրումներ մացնել կամ բարոյական խրատներ կարդալ անցած-գնացածի վերաբերմամբ, այլ պահանջում է միմիայն ճշգրտօրէն քննել առաջացումների գենեզիսը, հիմնական մղումները, ըմբռնել ու լուսաբանել դասաւորումների՝ միաւորումների և կազմալուծումների՝ իսկական պատճառական կապերը։

«Մշակի» սուղ էջերը հնարաւորութիւն չը պիտի տան մեզ, դժբաղդաբար, երկար ծանրանալու մատնանշածս խոշոր երևոյթի վրա. ստիպված ենք բաւականանալու երևոյթի հիմնական գծերի քննութեամբ։

Ի՞նչ պայմաններում օրսաց Գերմանիան Աւստրիայի և Իտալիայի դաշնակցութիւնը, ձրն էր նրանց արժէքը Գերմանիայի տեսակէտից։

Ամենից առաջ այս հարցերը պիտի զբաղեցնեն մեզ։

B. Lucifer

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

—o—

ՑՈՒՑԱԿ

Ա.-Կ. Ադիլ-Սեմենցվկոյ գիւղի Նուիրատուների

(Ցուցակ հայ փախստականների)

(Տես «Մշակ» № 102)

Ն. Բաղդասարեան և Ի. Ի. Լեբեդենկո 100-ական ռ., Լ. Կրավեց, Ի. Շաղովալենկո, Շախտարին 50 ական ռ., Ա. Ցովսէփեան, Մ. Ն. Տերեշչենկո, Ա. Օկերման, Մավրիդի 25-ական ռ., Պ. Պէչկով 15 ռ., Շուլեակովսկի և Լիպսկի 10-ական ռ., Դուդինա 4 ռ., Ա. Մ. Բոգդանով, Մ. Սաբբոտին և Ա. Եանսոն 3-ական ռ., Ի. Կրէմմեր 2 ռ., Ն. Տիմոֆէեվ և Ա. Պրիխոդկո՝ 1 ռ. 50-ական կ., Ֆ. Մուրավսկի, Մ. Օլիմբիեվ, Ե. Արխիպովէց, Ի. Աւգուլ, Եա. Ֆինեակին, Գուրգանով, Ա. Վ. Բոգդանով, Ն. Վ. Ժոլրովէց, Մարտիրսիկ, Ա. Կոստրոմին, Պ. Նեստրով, Ի. Սաւլորով, Ի. Շատինսկի, Արխիպով և Նէուստրոեվ 1-ական ռ., Պ. Զուսնիբին, Ա. Դէրդայ, Ն. Կոստրոմին՝ 50-ական կ.։

ՄԵՐ ԹԵՄ. ԴՊՐՈՑՆԵՐԻ ՍԱՍԻՆ

Ներկայումս, երբ նոր նշանակված լուսաւորութեան մինիստր կոմս Իգնատիեվի նախագահութեամբ քննութեան է ենթարկվում միջնակարգ դպրոցների ծրագիրը, նպատակ ունենալով այն բարեփոխել և յարմարացնել ժամանակակից պահանջներին, ժամանակ է, որ մենք էլ դուրս գանք ասիական անշարժութիւնից, գիտակցաբար վերաբերվենք մեր երիտասարդ սերունդի կրթութեան խնդրին և ետ չը մնանք ժամանակակից կեանքից։

Մեր թեմ. դպրոցների սկզբնական բուն նպատակը եղել է կրթված հոգևորականներ պատրաստելը, սակայն իրական կեանքը ապացուցում է, որ թեմական դպրոց աւարտողներից 5% անդամ հոգևոր ասպարէզը չէ ընտրում, այլ նախապատուում է ծառայել առևտրական հիմնարկութիւններում, ուսուցչութեամբ և այլն։ Միով բանիւ՝ թեմական դպրոց աւարտողները խոյս են տալիս հոգևորական դառնալուց, որի համար նրանք երկար տարիներ սովորել են դպրոցում։

Նրանցից մի մասն էլ չը կարողանալով ռուսական բարձրագոյն դպրոցները մտնել, ուղևորվում է արտասահման՝ իրանց ուսման ծարաւը յագեցնելու համար։

Եթէ մենք աչքի անցնենք մեր թեմական դպրոցների ծրագիրը, կը տեսնենք, որ նա համարեա պետական միջնակարգ դպրոցների ծրագրի նման է, ի բաց առած ռուսաց լեզուն, գրականութիւնը, եռանկիւնաչափութիւնը և հին լեզուները։

Թեմական դպրոցի տուած ուսման պաշարով զինված հայ երիտասարդը իրան կեանքի համար բոլորովին անպատրաստ է զգում։ Հոգևորական չէ կամենում լինել, առևտրական հիմնարկութեան մէջ ծառայելու պարապմունք չունի, պետական ծառայութեան մտնելու համար բաւական աչալուրջ, եթէ չասենք բոլորովին, ռուսերէն չը գիտէ, բարձրագոյն դպրոց մտնելու էլ իրաւունք չունի։ Ճարահատեալ՝ նա ժամանակաւոր կերպով ընտրում է ուսուցչական ասպարէզը, սպասելով որ մի օրուէ բարեբաղդ հանգամանք իրան ազատէ այդ փշոտ ասպարէզից, որ ի հարկէ շատ քչերին է աջողվում։

Եթէ մի կողմը թողնենք այն աչքի ընկնող պակասութիւնը, որ թեմական դպրոցներում ռուսաց լեզուն թոյլ են անցնում, և ուշադրութիւն դարձնենք առարկաներից նոյնիսկ հէնց հայերէնի վրա, կը տեսնենք, որ քիչ ընթացաւարտներ կան, որոնք կանոնաւոր կերպով տիրապետում են հայ լեզուին և գիտեն մայրենի գրականութիւնը, մի շատ ցաւալի երևոյթ, որ պատիւ չէ բերում թեմական դպրոցների կոչմանը։

Ես այստեղ երկար չեմ խօսի միւս առարկաների մասին, որ նոյնպէս հիմնաւոր կերպով չեն անցնում, և այդ աչքի է ընկնում մանաւանդ վերջին 10-ամեակում, երբ մեր դպրոցները և առհասարակ հասարակական հիմնարկութիւնները դարձել են որոշ կուսակցութեան պատկանող անհատների շահատակութեան ասպարէզ։

Այսպէս՝ մեր թեմական դպրոցներն անուանով միայն համարվելով միջնակարգ դպրոցներ, իսկապէս շատ հեռու են միջնակարգ համարվելուց՝ նախ այն պատճառով, որ այդտեղ աւանդվող առարկաները հիմնաւոր կերպով չեն անցնում, և երկրորդ՝ այն 9 տարին, որ աշակերտն անց է կացնում այդ դպրոցներում, բոլորովին զուր է անցնում, որովհետև մեր թեմական դպրոցներն ամեն իրաւունքներից զուրկ են։

Եթէ կառավարութիւնը գիմնազիաների, ռեալական և միւս դպրոցների ծրագիրը ժամանակակից կեանքի պահանջներին անհամապատասխան է գտնում, առաւել ևս մեր թեմական դպրոցների կիսատ-պռատ ծրագիրը և իրաւազուրկ դրութիւնը պէտք է ժամանակակից պահանջներին անհամապատասխան համարվեն, և մեզ հարկաւոր է ետ չը մնալ ժամանակի ոգու պահանջներից և թեմական դպրոցներին տալ մի այնպիսի ուղղութիւն, ծրագիր, որ այդտեղ սովորողներն աւարտելուց յետոյ որոշեալ արտօնութիւն ունենային և կարողանային բարձրագոյն դպրոցներում սովորել, ապա թէ ոչ ներկայ վիճակում նրանք իրանցից ներկայացնում են «ոչ միս և ոչ էլ ձուկ»։

Այս նպատակին հասնելու համար հարկաւոր է բան ի բուն անհատներից մի ժողով հրաւիրել Թիֆլիսում կամ Էջմիածնում և թեմական դպրոցների համար մի ընդհանուր ծրագիր կազմելով՝ ներկայացնել լուսաւորութեան մինիստրութեանն ի հաստատութիւն։

Աւելորդ չի լինի աւելացնել, որ ի նկատի ունենալով այն հանգամանքը, որ մեր թեմական դպրոցների գլխաւոր նպատակներից մէկն էլ հայերէն լեզուն հիմնաւոր կերպով անցնելն է, ցանկալի կը լինէր, որ թեմական դպրոցների ծրագիրը նմանէր պետութիւնների մասնակցութիւնը թուլի արտադրութեան մէջ հետևեալ կերպով է արտայայտվում. Միացեալ-Պետութիւնները արտադրում են 27 միլիոն տոն, Գերմանիան 14 միլ. տոն, Մեծ-Բրիտանիան 10 միլ. տոն, Ֆրանսիան 4 միլիոն տոն, Ռուսաստանը 3 միլ. տոն, Աւստրո-Ունգարիան 2.100,000 տոն, Բէլգիան 1.800,000 տոն։ Այսպէսով Գերմանիան է որ արդիւնագործական այդ ճիւղի մէջ իշխում է Եւրոպայում. նա միայնակ այնքան է արտադրում, որքան որ միասին Անգլիան ու Ֆրանսիան։

Ինչպէս Բրուկս Ադամն է ասում, մի սերունդ սրանից առաջ Անգլիան գնում էր ամերիկեան բամբակի $^2/_3$ մասը, այժմ նա $^1/_4$ էլ չէ գնում, իսկ նրա հում մետաղի արտադրութիւնը 1910 թուին կազմում է մետաղի համաշխարհային արտադրութեան 19,3%-ը։

Ահա թէ ինչով պիտի բացատրել պետութիւնների այն տենդային կռիւը, որ մղվում է աֆրիկական սև ցամաքի և ասիական պետութիւնների մէջ կօնցէսիաների շուրջը։ Պետութիւնները իրանց երկաթուղիների ցանցով, հեռագրի և էլեքտրականի էնէրգիայով՝ եւրոպական արդիւնագործութեան համար ստեղծում են միլիարդների գործ, ենթարկելով այդ յետամնաց երկիրների քաղաքական ու տնտեսական կեանքը Եւրոպային. նրանք միաժամանակ ստեղծում են այդ երկիրներում իրանց համար քաղաքական ազդեցութեան շրջաններ, յարմարեցնելով գաղութներին ամենաշատ իրանց հայրենի արդիւնաբերութեան՝ ստանալով նրանցից հարկաւոր հում նիւթ և սպառելով այնտեղ հայրենի արդիւնագործութեան արդիւնքները։

Ալ. Մել.-Աղաջ.

աւետարանական և կաթոլիկ համայնքների հաշուով պահվող գիմնազիաների ծրագրին, ուր մայրենի լեզուին մեծ տեղ է տրված։

Եթէ մեր թեմական դպրոցներն աւարտողները կարողանային մանել բարձրագոյն դպրոցները, այն ժամանակ մեր թեմ. դպրոցներն աւելի կը բարգաւաճէին, օրվհետև կը գրաւէին աշակերտների աւելի մեծ թիւ՝ իրանց այդ իրաւունքներով։

Ցանկալի կը լինէր, որ այս խնդրի մասին իրանց կարծիքը յայտնէին և միւս թեմերը։ Ց. Վարդանեան

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂ. ՓՈԽԱԴԱՐՁ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿ. ԺՈՂՈՎԸ

Կիրակի, մայիսի 31-ին, ցերեկով, քաղաքային Նիստերի դահլիճում տեղի ունեցաւ քաղաքային ապահովագրական ընկերութեան ընդհանուր ժողովը։

Այդ ընկերութիւնը բացի սովորական մարմիններից—այսինքն վարչութիւնից ու վերատուչիչ յանձնաժողովից—ունի նաև մի այլ մարմին՝ վերահսկող մարմին։

Ընդհ. ժողովը ընտրելով նախագահ. քաղ. վարչութեան անդամ Մ. Զաքարին և քարտուղար՝ երդ.-հաւատ. Ա. Բարխուդարեանին դիմեց օրակարգի խնդիրներից առաջինին, այսինքն 1914 թուի գործունէութեանը, որ ընկերութեան 26 տարվայ գոյութեան մէջ նպաստաւոր տարիներից մէկն է համարվում և տուել է օգուտ 25,498 ր. 34 կ.։ Առ 1-ն յունվարի 1915 թուի ընկերութեան մօտ ապահովագրված գոյքերի ընդհանուր թիւն է 1393, ըստ գումարի 25.399.530։ Հրդեհի դէպք այդ տարին պատահել է 49, որի համար վճարված է 9831 ր. 66 կոպ.։ Ամենախոշոր գումարը 3000 բուբլի տրված է Ներսիսեան դպրոցին պատկանող շէնքը հրդեհվելուն համար։ Պահեստի գումարը առ. 1-ն յունվարի 1915 թ. կազմում է 388,483 ր. 10 կ.։

Վարչութիւնը նախահաշուից դուրս ծախսել է 689 ր. 65 կոպ., որից 594 ր. 01 կ. մնացել է նախկին վարչ. անդամ Վ. Կանդուրալովի վրա ապառիկ, այդպիսով իսկապէս աւելորդ ծախսել է 95 ր. 64 կ.։

Ընդհանուր ժողովը վարչութեան այդ հաշուետուութեան առիթով նախ՝ լսեց վերահսկող մարմնի արձանագրութիւնը, և ապա՝ վերատուչիչ յանձնաժողովի զեկուցումը։

Վերահսկող մարմինը առաջարկելով հաստատել 1914 թուի հաշիւը՝ հրաւիրում է ընդհանուր ժողովի ուշադրութիւնը հետեւեալ անցանկալի երեւոյթների վրա. 1) որ վարչութիւնը տուել է ապահովագրողներին ապառիկով պոլիսներ 213 ր. 03 կ. (1911—1914 թ.), 2) որ վարչութիւնը իր ժամանակին չէ գանձում ապահովագրական վճարները և կորուստներ են լինում։

Այդ առիթով վարչութիւնը բացատրում է, որ առևտրական գործերում այդպիսի կորուստներ հնարաւոր են, մանաւանդ որ ընկերութիւնը ստիպված է մրցութեան մէջ մտնել ուրիշ ընկերութիւնների հետ։

Ա. Բաբով, Լ. Տիգրանեան և ուրիշները վարչութեան բացատրութիւնը համարում են անբաւարար։

Թեր ու դէմ վիճաբանութիւններից յետոյ, նախագահը, համարելով հարցը սպառված, քուէարկութեան է դնում ժողովի վերաբերմունքի խնդիրը վարչութեան արած շիջումների առիթով։

Ձայների մեծամասնութեամբ, ժողովը վարչութեան վարմունքը համարում է անկանոն և յանձնարարում է այսուհետև հետեւել կանոնադրութեանը։

Ապա հաստատում է 1915 թուի նախահաշիւը ի բաց առեալ վարչութեան ոճիրներից, ընդունելով միաժամանակ վարչութեան առաջարկը ընկերութեան ծառայողների ռոճիկները այս յունիսի 1-ից 20%-ով աւելացնելու մասին։

Այնուհետև ժողովը զբաղվում է այն մասնաժողովի պարտաւոր զեկուցումով, որը 1914 թ. մայիսի 25-ի ժողովով ընտրված էր ընկերութեան վարչական կազմը վերանորոգելու խնդրով զբաղվելու։

Պէտք է ասել, որ վերջին տարիներս այս ընկերութեան գործունէութիւնը նկատելի կերպով թուլացել է։ Կենդանութիւն մտցնելու համար ընդհանուր ժողովը ընտրել է մասնաժողովներ՝ թէ շտապը վերակազմելու և թէ կանոնադրութիւնը փոփոխութեան ենթարկելու։ Վերջինս շարունակում է իր աշխատանքները։ Իսկ վերանորոգութեան մասնաժողովը աւարտել է իր գործը և ներկայացրել իր զեկուցումը։

Դրա համաձայն՝ մասնաժողովի անդամներ Ի. Դոլուխանեան և Լ. Տիգրանեան անհրաժեշտ էին համարում ընկերութեան գործերը վարելու համար ունենալ վարչութեան մի անդամ ռոճիկով, իսկ միւս երկուսին նշանակել միանուագ վարձատրութիւն, երկուսը իրրև խորհրդի անդամներ։ Այդպիսով կը անտեսվի 3000 բուբլի։

Ա. Բաբով պաշտպանում է վերահսկող մարմնի առաջարկը վարչութեան նախագահի պաշտօնը համարել պատուաւոր, նշանակելով նրան միայն 300 ր. տարեկան ճանապարհածախք։ Դրանով անտեսվում է 120 ր.։

Վարչութիւնը իր հերթին առաջարկում է պահպանել նախկին դրութիւնը։

Մի չորրորդ առաջարկ էլ, աւելի հաշտարար, անում է վերակազմութեան մասնաժողովի անդամ Դ. Կորդանեան. այսինքն նշանակել վարչութեան անդամներից իւրաքանչիւրին minimum ռոճիկ 1500 ր. տարեկան։

Ի. Մելիքեան, նկատի առնելով որ երկար կը տեւեն ընտրութիւնները, առաջարկ է անում յետաձգելու ընտրութիւնները։

Ժողովականների համաձայնութեամբ, նախագահ Մ. Ա. Զաքարը ընտրութիւնների համար օր նշանակում է յաջորդ կիրակի, իսկ քուէարկութեան է դնում վարչութեան վերակազմութեան սկզբունքային հարցը։

Տուփերով կատարված գաղտնի քուէարկութիւնը տուեց հետեւեալ արդիւնքը։

Վերակազմութեան մասնաժողովի առաջարկը ստացաւ 47 սպիտակ, 46 սև ձայն, վերահսկող մարմնի առաջարկը 37 սպիտակ, 57 սև, վարչութեան առաջարկը (հին դրութիւնը) 34 սպիտակ, մնացեալը՝ սև, և Դ. Կորդանեանի առաջարկը՝ 52 սպիտակ, մնացեալը սև։

Այդպիսով սկզբունքով ընդունվեց Դ. Կորդանեանի առաջարկը՝ ունենալ վարչութեան երեք անդամ և տարեկան իւրաքանչիւրին տալ 1500 ր. ռոճիկ։ Դրանով կը խնայվի 700 ր. ի հաշիւ վարչութեան անդամների։

Ժամը 3½-ին ժողովը փակվեց, շնորհակալութիւն յայտնելով նախագահին։

Լ. Դ.

ՇԱՄԱԽՈՒ ԹԵՄ. ԴՊՐՈՑԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՆՐԱ ԸՆՏՐԵԼԱԳՈՑՆ ՎԱՅՐԸ

Շամախին լինելով ռուսահայ վեց թեմերից մէկի առաջնորդանիստ քաղաքը՝ ունեցել է Ա. և Բ. դասարաններով սահմանափակված իր հոգևոր դպրոցը մեզնից դեռ ևս էլ դար առաջ։

1859 թ. երկրաշարժը, սրան հետևող՝ հայերի գաղթը, դպրոցի նիւթական սաղդրութիւնը, նահանգապետութեան փոխադրվելը չեն թողնում, որ դպրոցը հետզհետէ առաջ գնայ։ Մի կերպ քարշ տալով իր խղճալի գոյութիւնը, շարունակում է ապրել մինչև մեր ծխ. դպրոցների առաջին փակման տարին, երբ թիւրիմացութեամբ՝ գլխաւորապէս ժամանակի առաջնորդների անհոգութեան պատճառով՝ վտանգվում է այս հաստատութեան գոյութիւնը. այնուհետև պաշտօնավարող թեմականներից և ոչ մէկը այդ ակներև ապօրինութեան դէմ, որ հակառակ է Պոլժենիայի օգուտն, չէ փորձում բողոքելու, նկատի առնելով հետզհետէ խստացող քաղաքական աննպաստ հանգամանքները։ Այսպէս մնում է փակված, մինչև որ Երիմեան Հայրիկի՝ 1907 թուին արած մի կարգադրութեան համաձայն, որը եօթը տարի շարունակ բարձի թողի էր արված, 1913/14 թ. Անանիա արքեպիսկոպոսը փորձում է կեանք տալ այդ դպրոցին։

Եւ քանի որ «Մշակից» դուրս մեր երկու օրաթերթերը, միացած Բագուի հասարակութեան ոլոշ խաւերի ներկայացուցիչների հետ, թէ իրանց էջերում և թէ Բագուում տեղի ունեցող նախապատրաստական ժողովներում Բագուին են առաւելութիւն տալիս տեղի և անտեղի պատճառներ մէջ բերելով, տեսնենք ինչ առարկութիւններ և ինչ պահանջներ ունի Շամախին Բագուի հանդէպ, օրվն եթէ թեմական ժողովի որոշումով էլ վիճակված է չունենալ իր մէջ այդ նուիրական հաստատութիւնը, ապա ինչ կերպ կարելի է բաւարարել և լրացնել նրա կարիքները և կամ որ չափով է վնասվում ազգային ընդհանուր գործը, եթէ մի մասնաւոր վայրի շահերը (ընդգծված բառերը «Արևելքինն» են) գերադասելով, Շամախու կողմնակիցներս, որ մտածում ենք նաև օգտաւոր Թիֆլիսի, Արէշի, Նուխու և Զաքաթալայի շրջանների հայ ազգաբնակութեան, յամառենք մեր առածին։

Եթէ տեղի խնդիրը քահանաների առաւելագոյն դարձնենք, պիտի ընդունենք նախ, որ թեմական հաստատութիւնների հիմնումը Շամախում առաջ է եկել ոչ այն հանգամանքներից, որ մի ժամանակ Շամախին փայլելիս է եղել, իսկ այժմ հերթը Բագուին է հասել, վարչական կենտրոնատեղի է դարձել, այլ այն, որ ամբողջ Կասպիականում հայաշատ գաւառներն են միայն իրար հետ սերտ կապված, Շամախին և Գեօգչայը, որոնց բնակիչները բացառապէս երկրագործ գիւղացիներն են։ Անշուշտ այդ հանդամանքը նկատի առնելով իր ժամանակին նպատակայարմար և արդիւնաւէտ են ճանաչել առաջնորդանիստ ընդունել Շամախին։ Հետևապէս թեմական դպրոցն էլ այս շրջանում մնալով միայն՝ կարող է/իր բուն նպատակին ծառայել և մատչելի դարձնել հացի ու ջրի չափ անհրաժեշտ մայրենի կրթութիւնը 50-ի չափ գիւղերի, երկու քաղաքների ազգաբնակութեան և Արէշի ու Նուխու գաւառների հայ ժողովրդին, որը չէ օգտվում Շուշու թեմականից հեռաւորութեան պատճառով։

Բագուի օգտին խօսողները, մոռանալով այդ քաղաքի առանձնայատուկ դիրքը և քաղաքապետութիւն լինելը, առարկում են, թէ հայ ազգաբնակութեամբ անհամեմատ աւելի բազմամարդ է, քան Շամախու և Գեօգչայի գաւառները, հետևապէս շատ աշակերտութիւն կը տայ. երկրորդ՝ որ նա յարմար հաղորդակցութիւն ունի և նահանգի բարձր իշխանութեան վայրն է ու մտաւոր կենտրոնը։ Այսպէս դատողները մոռանում են, որ թեմական դպրոցը Բագու տանելով, նրանք մի խեղճ թեմ զրկում են իր միակ սեփականութիւնից և հոգևոր դպրանոցը տալիս են հայութեան այն բաժիններին, որոնցից իւրաքանչիւրն իր վայրում արդէն ունի և օգտվում է։ Խօսենք աւելի պարզ։ Բագուն իր առանձնայատուկ դիրքով դրաւել է հայ ազգաբնակութեան հոծ բազմութիւն գլխաւորապէս մեր միւս թեմերից։ Այս եկւորների մի մասը հաստատուն նստակիաց կեանք էլ չունի։ Նրանցից շատերը ժամանակաւորապէս ընտանիքից, հայրենիքից հեռացած անատուն և անտէր՝ բաղդ որոնողներ են և բաւարներ։ Երկրորդ լուրջ առարկութիւնն այն է, որ իբր թէ Շամախին և Գեօգչայը թեմականին աշակերտութեան մեծ թիւ չեն տայ, իսկ Բագուն կը տայ։ Այսպէս խօսողները դիտմամբ՝ կարծես աչք են փակում և չեն ուզում տեսնել այն ախտը, որով տառապում են Ներսիսեան, Երևանի և Շուշու թեմականները։

Կարծէք Բագուն բացառութիւն պէտք է կազմի. նրանք մոռանում են, որ Բագուն ունի բազմադիմի և բազմապիսի դպրոցների ցանց, և հայը, եթէ մանաւանդ նա տաղանդաւոր ունի, այդ դպրոցները թողած՝ իր ազգային հայոց հոգևոր դպրանոց չի ուղարկիլ։ Քանի որ խօսքը մատաղ սերնդի կրթութեանն է վերաբերում, տեսնենք աշակերտութեան ինչ թիւ կը տան Շամախին և Գեօգչայը յիսունի մօտ գիւղերով, որոնք այս տարվանից մօտ 20 ծխական դպրոցի տէր լինելով հնարաւորութիւն ունեն սովորող թեմականացուներ մատակարարելու։ Տեղիս ըէալական դպրոցն ունի մօտ 60 հայ տղաներ, քաղաքայինը՝ էլ աւելի, հայոց երկսեռ ծխականը մօտ 100 տղաներ, հայ-աւետարանականներինը 40, երկու ռուս-հայկական դպրոցներում սովորում են դարձեալ մօտ հարիւր, ուրեմն միայն Շամախում սովորող մանուկների թիւը անցնում է 300-ից, հասնում 400-ի։ Սրանցից զատ դեռ փողոցներում էլի պատահում են մանչեր, որոնք դպրոց չեն յաճախում այլ և այլ պատճառներով։

Եթէ այս պակառելի թուից հնարաւորութիւն տրվի գոնէ մի մասին աշակերտելու թեմականում և եթէ սրա վրա աւելացնենք մօտ հազար ընտանիք ունեցող այլախօս Մադրասայի աշակերտութիւնը, որ հինգ վերստ հեռաւորութիւն պիտի կարի, մօտիկ աչքի ընկնող 300-ից մինչ 100 տուն ունեցող Սաղիանը, Քիրքէնջը, Մէյսարլու, Քեալաբանին, Խանիշենը, Դարտիարքանլի հետ և ուրիշ մանր գիւղեր, պա 20—25 վերստ հեռաւորութեան վրա գտնվող մեծ գիւղերը՝ Գիւրջիվանը, Քեավանդին, Զարգարանը, Հնդարն ու Քօվլուչը և մի տասնեակից աւելի ուրիշ անշան շէներ, դեռ Գեօգչայի գաւառը չը հաշուած, կը ստանանք հայկական կրթութիւն ստացողների մի տաւար քանակ։ Ինչ վերաբերում է Գեօգչայ հայաշատ գաւառին, որ շատերի կարծիքով իբր թէ Շամախուց կտրված է և վերջինիս արևելեան ծայրումն է գտնվում, պէտք է նկատենք, որ գործնականում առևտրական և վարչական յարաբերութիւնների մէջ քարտէզի ցոյց տուածի հակառակն ենք տեսնում։ Շամախու ըէալականում Գեօգչայի և Զաւաղի գաւառներից կան մի տասնեակից աւելի հայ ու թուրք սովորողներ, որոնք մի ժամանակ Բագուի պետական դպրոցումն են սովորել և ապա փոխադրվել մեր դպրոցը, որը արդէն հաստատուն հիմքեր ունի և շուտով կունենայ 90,000 բուբլանոց մի շէնք։

Ճշմարիտ է, Շամախին յարմար հաղորդակցութիւն չունի և այդ պատճառով եռ է ընկած, բայց այդ ասվում է Կովկասի նահանգների և Ռուսաստանի քաղաքների նկատմամբ, նոյնպէս և Դերբենդի և մասամբ Ղուբայի, այլ ոչ Գեօգչայի համար։ Սրանցից Դերբենդը հայաբնակ գիւղեր չունի, Ղուբայի շրջանում միայն երեք հայկական մանր գիւղեր կան։ Ուրեմն պատկառելի հայութիւն ունեցող և իրար հետ վաղուց ի վեր սերտ կապված Շամախին և Գեօգչայը 50 գիւղերով հէնց ազգային ընդհանուր գործի տեսակէտից ոչ կարելի է Բագուի հետ համեմատել և ոչ էլ արհամարհել ու իր սեփականութիւնից զրկել. մի մոռանաք, որ Բագուի և արուարձանների հայ հոծ ազգաբնակութեան մի խոշոր մասը անատուն անբնատնիք բանւորութիւն է, որի մէջ բաժին ունի մեր երկու գաւառների գիւղական երկրագործ ժողովուրդը ևս։

Որ այդ մեծ զանգուածը խորթ չը պիտի համարվի ազգային տեսակէտից և վերջապէս հնարաւորութիւն պիտի ունենայ իր գաւառներին հայկական կրթութիւն տալ իր միջավայրում, այդ մասին երկու կարծիք չէ կարող լինել։

Ամենեին չուզենալով տեսնել վտանգված հայ ժողովրդի և հայ քաղաքակրթութեան շահերը Բագուի շրջանում, նոյնը չենք կարող տանել և մեր շրջանում, ուր յիսունից աւելի մեծ ու փոքր հայախօս և այլախօս գիւղերում, մեծամեծ աւաններում չունենք հոգևոր դպրոցներն աւարտած տեղացի ուսուցիչներ, գործիչներ. չենք խօսում քահանաների մասին, որովհետև մի հատիկ էլ չունենք գոնէ դրսեցի։ Մեր քահանաների կրթութեան չափը՝ նոյն իսկ քաղաքներում այրուբենը ջոկելու, գրի սևն ու սպիտակը ճանաչելու սահմանից դէնը չի անցնում։ Զուրկ լինելով տարրական ուսումից, նրանք ոչ միայն հոգևոր դասի հեղինակութիւնն են վարկաբեկում, այլ և կոպիտ ու անկիրթ լինելով, իրանց անտիպաշտութեամբ, նախապաշարումներով և գրբացութեամբ մթագնում են խաւար ժողովրդին և սառեցնում հօրը եկեղեցուց, ազգօգուտ մտքերից։ Բայց այդ դեռ ոչինչ։

Այդ քահանաների մի մասը կասկածելի ճանապարհներով մանրավաճառութիւնից և լակէյութիւնից քահանայութեան արժանացած լինելով դեռ ևս Մեսրոպ եպ. Սմբատեանի ժամանակից և ապա թերին լրացած Անանիա արքեպիսկոպոսի կողմից՝ պատճառ են դարձել, որ մեր ժողովուրդը գաղափար ու հասկացողութիւն չունի մեր հոգևոր կրթարանների մասին և մի առանձին դժուարութեամբ կամ բոլորովին չէ ուզում ուղարկել իր որդիներին այդ դպրոցները. իսկ ճանաչողներն, ովքը ի շատ բանիմաց անձերի մօտ այդ հաստատութիւնները հեղինակութիւն չունեն դարձեալ շնորհիւ դրանց, որովհետև ամենքին հաւատացնում են, որ իրանք աւարտել են Ճեմարանը, Ներսիսեանը։

Անհրաժեշտ է թեմականը մի ուրիշ կողմից ևս, մանաւանդ եթէ նա ունենայ գիւղատնտեսական և գործնական գիտութիւնների բաժին։ Մեզանում հողի արդիւնաբերութեան բազմազան ճիւղերը յարատևում են մնալ նախապատմական շրջանում։ Կան գիւղեր, որոնց ժողովուրդը գաղափար չունի ոչ միայն մեքենաների, այլ և հողի պարարտացման գործի մասին և այս ուղղութեամբ արած իւրաքանչիւր նոր քայլ համարվում է մեղք, յանցանքների բարդում, կարկտահար լինելուն և Աստուծոյ ցասմանը արժանի արարք. բացի սրանից՝ ազգաբնակութեան մեծ մասը գինու և օղու արդիւնաբերութիւնից անգոհ, իրանց անչափահաս և հակողութեան կարօտ զաւակներին ծխական դպրոցներից կիսատ հանելով, որովհետև թեմական չը կայ, ցրում են Բագու և այլ քաղաքներ, տեղաւորում են զանազան կասկածելի վայրերում՝ դուքաններում, նկուղներում՝ գինու շիշ լուանալու, առևտուր սովորելու նպատակով, նրանք այսպիսով խորթանում են վար ու ցանքից, մանից, արօրից, ընտելանում են գինու բաժակին, դառնում պատուհասներ, այլասերվում են և մնում բարով ասում ազգին, մտաւոր կեանքին։

Թեմական դպրոցի գոյութիւնը հրամայողական մի պահանջ է նաև հետևեալ պատճառով. Շամախին և Գեօգչայը 50-ից աւելի գիւղերի բնակչութեամբ թաղված լինելով այլատարը և այլակրօն ցեղերի մէջ. միշտ էլ կարող են հեշտ կերպով կուլ գնալ։ Մի կողմ թողած այլախօս Մադրասան, Քելվարն ու Խաչմազը, պէտք է ասենք, որ հայախօս համարվածներից շատերի խօսքի կէսը թուրքերէն է։

Ծխական դպրոցները չեն կարողանում խաղալ այն դերը կեանքում, ինչ որ հոգևոր դպրոցները։ Զէ որ սրանցից են ելնում ու պիտի ելնեն ուսուցիչներ ու քահանաներ, կուլտուրայի մշակներ, մայրենի լեզուն ծաւալողներ, մեր գիրն ու գրականութիւնը խնամողներ ու զարգացողներ։ Հէնց հոգևոր դպրոցի չգոյութեամբ է բացատրվում, որ Շամախու շրջանի հայերը աւելի խղճալի ու յետամնաց են, քան միւս թեմերի հայ ազգաբնակութիւնը։ Այս այսպէս լինելով, պարզ է, որ անտարբեր նստելը, չօգտվելը բարեյաջող հանգամանքից ազատելու համար մեր շրջանը օտարացումից, որ իրաւունք ունի թեմական դպրոց ունենալու, մեր կողմից կը լինի յանցանք, մանաւանդ որ վաղ թէ ուշ պատերազմից յետոյ Շամախին մելիքվկասեան երկաթուղագծի շնորհիւ կապվելու է Բագուի, Գեօգչայի, Նուխու, Զաքաթալայի և այլ վայրերի հետ. իսկ եթէ սրան աւելացնենք մեր թեմերի բաժանման խնդիրը, որ հերթի է սպասում և պատերազմից յետոյ լուծում պիտի ստանայ, որի օրոշումով Շամախին կարող է զատվել Բագուից, ապա հասկանալի կը լինի մեր կորուստի մեծութիւնը։

Սրանից դուրս՝ Բագուում բացվելիք թեմականը, ի հարկէ, առանց գիւղատնտեսական բաժնի, որովհետև բուսականութիւնից զուրկ է, չէ կարող գրաւել թեմիս խուլ ու կորած անկիւններից սովորողների մեծ թիւ, հէնց միայն այն պատճառով, որ աշակերտութեան մեծ մասը, եթէ ոչ ամբողջովին, աղքատ դասակարգից պիտի լինի անշուշտ, իսկ Բագուի կեանքը թանգ է և շատ ու շատ կողմերից աննպաստ։

Նրանք, որ բաղդ կունենան աշակերտելու և աւարտելու այդ դպրոցը, օչնչով չեն կապվելու գաւառի հետ, զուրկ քիչ և շատ բարեկեցիկ կեանքից, միշտ ենթակայ վրատանդների և հիւանդութեանց, աւելի գերադասելու են ծառայել Բագուի և Բալախանու գրասենեակներում, քան ցրվելու և սփռելու լոյս ու գիտութիւն ժողովրդի մէջ. պէտք է թեմականը հիմնվի մի յարմար վայրում, ունենայ գիւղատնտեսական և այլ գործնական գիտութիւնների ճիւղեր, որ մեր պատանիները մնան իրանց միջավայրում, բուն երկրին ու ժողովրդին կապած։ Հէնց այսպիսի աննպաստ պայմաններում հակառակ շատերի տրամաբանութեան, մեր կարծիքով, չը պէտք է շփվի ապագայ մեր դպրոցականը, չը պէտք է ինքը օրինակ տայ գռեհիկ գիւղացուն, ոգէտ արհեստաւորին։ Եթէ այսպէս չը դատէին մեր բազմերախտ գործիչները, երևի մենք չէինք ունենայ ոչ Գէորգեան ճեմարանը, ոչ Շուշու թեմականը և ոչ էլ միւս ազգօգուտ հաստատութիւնները։

Դնելով այդ բոլորը Շամախու թեմական ժողովի պատգամաւորների առաջ՝ հրաւիրում ենք նրանց ամենայաւելի ուշադրութիւնը։ Եթէ գերադասութիւն տրվելու է Բագուին և կամ ժողովի անդամները բաժանվելով երկու խմբերի զէջման ճանապարհ չեն բռնելու, ապա մնում է, որ մեր շրջանի պատգամաւորները փոխանակ անտեղի տրտունջների և բողոքների՝ հաղորդեն և պահանջ դնեն, որ հոգ տարվի միևնոյն ժամանակ Շամախու մասին։ Ժողովը կարող է դիմել Ամենայն Հայոց Կաթողիկոսին և նրա տրամադրութեան տակ դրած շամախեցի բարեւարնակ Լալայեանների 100,000 բուբլով, Միրզաբէկեանների և Մայիլեանների յատկացրած դրամներով՝ թոյլատուութիւն խնդրել՝ բանալու Շամախում մի օրիորդաց և մի տղայոց ծխականից բարձր, հոգևոր դպրոցից ցածր կրթարաններ։ Սրանցից առաջինը կը շինվի եկեղեցու բակում, իսկ միւսը այն հողաբաժնի վրա, որ յատկացված է թեմականին։ Հարկը պահանջվելիս, մեր թեմերի բաժանման խնդիրը լուծվելիս դժուար չի լինի թեմական դպրոցի վերածելու այն, որը մի քանի տարուց յետոյ գործնականորէն էլ ցոյց կը տայ՝ հարկաւոր է Շամախուն նման դպրոց թէ ոչ։ Ց. Բաղրամեան

ՄԱՑՐԱՌԱՂԱՌԻ ՏԵՂԱՓՈԽՈՒԹԵԱՆ ԾՐԱԳԻՐԸ

Վերջին ժամանակներս ազդեցիկ շրջաններում հետզհետէ համակրութիւն է ստանում մայրաքաղաքը Պետրոգրադից տեղափոխելու Ռուսաստանի օրէնք քաղաք։ Մայրաքաղաքը տեղափոխելու ծրագրի կողմնակիցները մատնանշում են ամենից առաջ Պետրոգրադի կլիման։ Ռուս մարդը սովոր է վաղ վեր կենալ։ Նրա ուշխատանքի օրը սկսվում է 5—6 ժամին առաւօտեան։ Իսկ Պետրոգրադի կեանքը, շնորհիւ ձմերային մթութեան, խիստ ուշ է զարթնում։ Այն ժամանակ, երբ առաջ ցերեկ. ժամը 12-ին արդէն ճաշում էին, այժմ այդ ժամանակ միայն զարթնում են։

Մայրաքաղաքը տեղափոխելու ամենաջերմ պաշտպաններից են հանդիսանում արդարադատութեան մինիստր Ի. Գ. Շչեգլովիտով և նրա օգնական Ի. Ե. Իլեաշենկո։

Ծրագրվում է մայրաքաղաքը տեղափոխել Կիեվ, սակայն մի ուրիշ աղբիւրի համաձայն, խօսվում է Ղրիմ տեղափոխելու հնարաւորութեան մասին։ Վերջին ծրագրի նախաձեռնողները մատնանշում են, որ Դարդանելի բացումով, Ղրիմը առևտրական մեծ նշանակութիւն կը ստանայ և նրա զարգացումը առաջ կերթայ հսկայական քայլերով, որով և մայրաքաղաքի՝ Փիւնական ծոցում ունեցած դրութիւնը կատարելապէս կը փոխարինվի Սեւծովի ափերում։

Մայրաքաղաքի տեղափոխութիւնը, ինչպէս ասել է կաբինէտի անդամներից մէկը, այնքան էլ անիրագործելի չէ, ինչպէս թւում է առաջին հայացքից։ Ի հարկէ, այդ ծրագրի իրագործումը չի կարելի սպասել մօտ տարիներս, որովհետև դրա լուծման համար կը հարկաւորվին մի քանի տարի, մինչև բարձր կառավարչական հիմնարկութիւնների պատրաստութիւնը։ («Р. У.»)

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԳԱՒԱՌԻՑ

Լուրեր Շուշուց

Շուշի, 24 մայիսի

✦ Մօտ մի շաբաթից աւել է, ինչ տեղիս եղանակները վատ են. ամեն օր մառախուղ, անձրև, քամի, ցուրտ։ Այսօր էլ ամբողջ օրը անձրև եկաւ։ Կէսօրից յետոյ անձրևն այնպէս յորդացաւ ու ջուրն այնքան սառակացաւ, որ շատ տներ ջրով լցվել էին։

✦ Թեմ. դպրոցի պարապմունքները դադարեցին մայիս 18-ին. առաջիկայ ուսումն. տարում բացվելու է 7-րդ դասարան, ուստի 6-րդ դասարանն աւարտողներին աւարտական վկայական չը տուին։

✦ Այս տարի, ինչպէս ասում է թեմիս կառավարիչ Զաւէն Վ., թեմի ծխ. դպրոցների բարգաւաճմանը նպաստելու համար կազմվելու է մի ուսումնարանական յանձնաժողով, որ պիտի ունենայ երեք շրջանային տեսուչ, որոնք պիտի աշխատեն Ղարաբաղի թեմը պատել ծխ. դպրոցների ցանցով։

✦ Տեղիս Եղբայրական Օգնութեան կանանց կոմիտէն մօտ օրերս կը կազմակերպի «մանկական զբօսանք» կոմիտէի օգտին։

✦ Շուշու նոր քաղաքագլուխը մի շարք ցանկալի նորութիւններ է մացրել քաղաքում։ Մէյդանի ամեն մի փողոցում՝ բացի քաղաքապետից՝ կանգնած է նաև մի դընապան, որը պիտի հսկէ փողոցների մաքրութեան վրա և շուտ շուտ սրբէ աղտաոտութիւնները։

Կանաչի և մրգեղէն ծախողներին առանձնացրել և Մէյդանից ներքև են տարել։ Ծրագրված է նաև Մէյդանի բուդկաները քանդել տալու։ Ասում են՝ բուդկաների տեղը ծաղկանոց են դցելու, ուր կարող են պարապ մարդիկ իրանց ժամանակն անց կացնել, առանց խանութպաններին խանգարելու։

Լաւաշչիները զրկվում են իրանց տանը հաց ծախելուց։ Առանձին տեղ է յատկացված, ուր պիտի բերեն բոլոր լաւաշները. այնտեղ նախ պիտի ստուգվեն կշռքն ու կշռաքարերը, ապա ապա իրաւունք կունենան վաճառելու հացը։ Վ.

Լուրեր Գանձակից

Գանձակ, 25 մայիսի

Ամբողջ մայիսն անցնում է անձրևներով. օր չի լինում որ անձրև չը լինի, կամ նոյնիսկ հեղեղ. այգեպէտերը սաստիկ գանգատվում են, որ տեղացող անձրևները թոյլ չեն տալիս այգիները բժշկելու. բացի այն, որ բժշկելու համար հարկաւոր նիւթերը անչափ թանգացել են ու շատ դժուարութեամբ են ձեռք բերվում, եղածն էլ հնար չը կայ գործադրելու ամեն օր տեղացող անձրևների շնորհիւ, որոնք ամեն ինչ փտեցնում են։

◆ Յունիսի սկիզբներում տեղիս նահանգական վարչութիւնը տեղափոխվում է ամարանոց Հաջի-քէնդ. որքան յիշում ենք լրագիրներից, Երևանի նահանգական վարչութիւնը այս ամառ թողել է ամարանոց տեղափոխվելու մտադրութիւնը։

◆ Անցեալները ես գրեցի «Մշակում», որ գիմնազիայի հայ կրօնուսոյց քահանան հաստատվել է ս. Յովհաննէս եկեղ. ծխական քահանայ և որ հարկաւոր է մի նոր կրօնուսոյց նշանակել. տեղիս յաջորդ Լևոն վ. դիմել է շատ տեղեր, բայց յարմար թեկնածուներ չը կան։ Մինթէ իսկապէս չը կայ մի յարմար կրօնուսոյց հայ քահանայ, սարկաւագ, որ կարողանար այս պաշտօնը ստանձնել մեր գիմնազիայում. կրօնուսոյցը ստանում է տարեկան 900 ր. ռոճիկ. մի գուցէ աշողվի փոքր ինչ էլ աւելացնել տալ սրա քանակը։ Արժէր որ Թիֆլիսի թեմի առաջնորդը ուշադրութիւն դարձնէր այս գործի վրա. մանաւանդ այն խնդրի վրա, որը գանձակեցիները ուղարկել են առաջնորդին դեռևս 1913 թ. դեկտեմբերին, այն է՝ տեղիս գիմնազիայի կրօնի ու հայոց լեզուի դասերի դասատուների, նրանց ռոճկի մասին և այլն։ Իրաւ է, այժմ տագնապալի օրեր ենք անց կացնում և մեծ-մեծ գործեր կատարելու ժամանակ է, բայց սա էլ չնչին գործ չէ և արժէ որ հոգւոր իշխանութիւնը փոքր ինչ ուշադրութիւն դարձնէ նրա վրա և 400-ի չափ հայ երեխաների շահերի վրա։

◆ Վանի առումը այստեղ մեծ ուրախութիւն պատճառեց հայ հասարակութիւնը. այս լուրը ստացած երեկոյեան հայ եկեղեցասրդութիւնը մանիֆեստացիա արեց։

Յովսէփ Խօջայան

Լուրեր Օնից

Օնի, 25 մայիսի

Այս տարի մեր եկեղ.-ծխ. դպրոցում քննութիւնները վերջացան ամսոյս 22-ին, իսկ շաբաթ, 23-ին, Լուսաւորչի տօնին, դպրոցի սաները եկեղեցում պատարագին երգելուց յետոյ դպրոցում կազմված հանդէսին, ժողովրդի ներկայութեամբ, վկայականներ ստացան։ Հետևեալ օրն էլ՝ սաները դպրոցի ուսուցչի և հոգաբարձուների հետ միասին լուսանկարվեցին։ Նոյն օրը համայնքն ուսուցչին, իր պաշտօնը բարեխղճութեամբ կատարելուն համար, ճաշով պատուեց։

◆ Ահա երկրորդ տարին է, ինչ Օնիի վերախօս 37 տուն հայ ժողովրդի համար գոյութիւն ունի մեր դպրոցը։ Հոգաբարձութիւնը ցանկանում է ունենալ եկող տարվանից նաև 4 րդ բաժնմունք։ Այս տարի էլ դպրոցին՝ կ. Հ. Բ. Ը. խորհուրդը երգ. Բոզարջեանների նուէրներից յատկացրել էր 200 ր., որի համար օնեցիք նրանց խորին շնորհակալութեան թուղթ ուղարկեցին։

◆ Ինչպէս ուրիշ տեղերում, այնպէս էլ այստեղ ձիւնը և շարունակ տեղացող անձրևները բնակիչներին շատ վնաս են պատճառում։ Բնակիչները մտանված են անելանելի դրութեան. հացը թանգ է, միս, շաքար, նաւթ, փայտ, շորացու կտորներ, մի խօսքով՝ ամեն բան թանգ է։

◆ Օնիի միակ կամուրջը, որի վրայով Քութայիսի և գիւղերի կողմից Օսէթիայի ռազմական ճանապարհով աւանս էր մուտք վում ամեն տեսակ պաշարեղէն, ներկայումս փակված է, որովհետև փտել է և անպէտ քացել, այնպէս որ վարարած սրընթաց Ռիոնը նրան շուտ կարող է քանդել։ Կամուրջով թոյլատրվում է անցնել միայն մարդկանց, իսկ բեռամբարձ սայլեր տաղանքներով ժամերով թափված մնում են գետի միւս կողմը։ Ասում են, թէ կամուրջի շինելը զեմստվոյի պարտականութիւնն է. բայց թէ երբ պէտք է շինվի, դեռ յայտնի չէ։

Աբ. ք. Բերուչեան

Մի նոր նուիրատուութիւն

Բագու, 31 մայիսի

Բագուի վաճառական Նիկոլայ Բէզլարեան Վարդանեանը յանուն իր ծխատէր և հայրենակից Ներսէս քահ. Տէր-Կարապետեանի ուղղած մի նամակում—խոստանում է 10,000 ր. նուիրել Շուշու գաւառի Նոր-Շէն գիւղում շինելու մի գեղեցկաշէն դպրոցական շէնք նոյն գիւղի՝ նորերս վերանորոգած նոյն քահանայի ձեռքով՝ եկեղեցուն մոտ. ուստի խնդրում է քահանային հրաւիրել նոր-շէնցի Աստուածատուր Տէր-Կարապետեանին, Բախշի Զհանկիրեանին և իրան՝ բարեբարին, կազմել մի յանձնաժողով և հէնց այս ամառ սկսել գործը։

Տէր-հայրը յուլիսի մէկին յիշեալ յանձնաժողովի անդամների հետ միասին կը գնայ Նոր-Շէն և ընտրելով յարմար դեռին կը ձեռնարկէ գործի։

Փողը արդէն փոխադրված է բանկ։ Պատիւ և փառք հայրենի գիւղի երախտաւոր զաւակին։

Կամսար

Լուրեր Սղնախից

Սղնախ, 25 մայիսի

Այս տարի այգեպէտերը մեծ նեղութեան մէջ են, օրովհետև արջասպ չէ ճարվում։ Առաջ արջասպի պուդը ծախվում էր 4—5 ր., այժմ դարձել է 30 ր.։ Արջասպը ստացվում էր Անգլիայից։ Ժամանակին այգեպէտերը չը հոգացին այս մասին, չը նայելով որ մի վրացի այգեպործ Անգլիայից խոր-հուրդ էր տուել Կախէթի այգեպէտերին՝ ստանալ Անգլիայից արջասպ Շվեդիայի վրայով, թէև սա նախկին գնից մի փոքր թանգ կը նստի։

◆ Ռուսաստանում օդեվաճառութեան արգելումը մեծ ազդեցութիւն ունեցաւ Կախէթի գինու գների վրա։ Այժմ Կախէթի գինին մեծ չափով արտահանվեց Ռուսաստան։ Մի վեդրո գինին, որ առաջ ծախվում էր 2 ր., այժմ ծախվում է 4—5 ր.։ Շատ շահվեցին այն այգեպէտերը, որոնք աշնան սկզբին չը ծախեցին իրանց գինին, այլ պահեցին։ Շահվեցին մեծապէս և գինու պահեստներ ունեցողները, որոնք գնել էին 50—100 տակառ գինի։ Այժմ մի տակառը 150 ր. աւելի արժէ նախկին գնից։

◆ Անձրևներից և հեղեղներից Սղնախում փլվեցին երկու տուն։ Դժբաղդութիւն մարդկանց հետ չը պատահեց։ Հայոց դըպրոցի համար շինութեան կառուցումը յետաձգվեց պատերազմի պատճառով։

N. N.

ՀԱՅ ԳՐԱՍԻՐԱՑ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Բագուն կենտրոն է դառնում մի նոր հայկական կազմակերպութեան։ Այդ կազմակերպութիւնը Հայ Գրասիրաց Ընկերութիւնն է, որի կանոնադրութիւնը արդէն հաստատված է, իսկ հիմնադիր ժողովը կայացաւ մայիսի 28-ին։ Ընկերութեան հիմնադիրներն են. տիկնայք՝ Կատարինէ Բահաթուր և Սառա Սաղեան, պարոններ՝ Յովհաննէս Յովհաննիսեան, Տիգրան Յովհաննիսեան, Աստուածատուր Վաչեան, Երուանդ Թադիանոսեան և Մխիթար Տէր-Անդրէասեան։ Բագուում անծանօթ անուններ չեն սրանք և հայ խօսքը՝ յանձինս այս անունները ներկայացնող անձերի՝ ունի կամ իր ներկայացուցիչները կամ ջերմ բարեկամները։

Ի՞նչ նպատակի պիտի ծառայէ նոր ընկերութիւնը, որ ըստ կանոնադրութեան համակովկասեան լինելու իրաւունքն ունի։

Հայ Գրասիրաց Ընկերութիւնը հիմնարկվում է այն նպատակով, որ նպաստէ հայ գրականութեան բարգաւաճման, հայ գրողների մատաղ, բարոյական և գեղարուեստական զարգացման և նրանց նիւթական դրութեան բարելաւման։ Սա ընկերութեան հիմնական նպատակն է։

Այդ նպատակի իրագործման համար ընկերութիւնը իրաւունք ունի հրատարակել ինքնուրոյն և թարգմանական երկեր, ինչպէս նաև ժողովածուներ և պարբերական օրգան։ Դարձեալ նա իրաւունք ունի նշանակել մրցանակներ լաւագոյն հայ ինքնուրոյն և թարգմանական երկերի համար, կազմակերպել հրապարակական դասախօսութիւններ և զրուցատրութիւններ գրական, գիտական և գեղարուեստական հարցերի շուրջը, ապա նաև համերգներ, ներկայացումներ և գրական-երաժշտական պարերեկոյթներ։ Ընկերութիւնը դպրոցական հիմնարկութիւններում հաստատում է թոշակներ հայ գրողների զաւակների և սկսնակ հայ գրողների համար։ Նա տալիս է օժանդակութիւն, նպաստ և թոշակ հայ գրողներին և նրանց ընտանիքներին, ինչպէս և այն գրողներին, որոնք հնարաւորութիւն չունեն առանց կողմնակի օգնութեան հրատարակելու իրանց ինքնուրոյն հայերէն կամ թարգմանական երկերը։ Ընկերութիւնը օժտված է իրաւաբանական անձի իրաւունքներով, այսինքն կարող է ունենալ շարժական ու անշարժ կայք, ընդունել կամ օտարացնել այդ կայքը, ապա պատասխանատու լինել դատարանի առաջ, ինչպէս և պաշտպանվել դատարանի միջոցով և այլն։ Նա օժտվում է նոյնպէս տէր կանգնել հեղինակային իրաւունքի, այսինքն ձեռք բերել հայ գրողներից նրանց հեղինակութիւնների բացառիկ իրաւատիրութիւնը։

Ընկերութեան անդամների թիւը չի սահմանափակված։ Նրա միջոցները գոյանում են անդամավճարներից (տարեկան 5 ռուբլի), ապա յօժարակամ նուիրաբերութիւններից, զանազան երեկոյթների, դասախօսութիւնների և այլ համանման ձեռնարկների մուտքից։

Ահա Հայ Գրասիրաց Ընկերութեան կանոնադրութեան հիմնական կէտերի բովանդակութիւնը։ Նա մեզ ասում է, որ ընկերութիւնը շրջահայաց ծրագրով կամենում է զօրաւիգ լինել հայ խօսքի, ջատագով հանդիսանալ այդ խօսքի բարձր պարտականութեան ու գեղեցկութեան, թիկունք դառնալ այդ խօսքի կրողներին և թոյլ չը տալ, որ նրանք մարտիրոսական իրանց ընտրած անդաստանում։

Սակայն խօսքը առանց գործի մեռած է։ Ընկերութեան հիմնադիրների մտայղացումը ինքնին կարող է գեղեցիկ ու գրաւիչ պարունակութիւն ունենալ, բայց գործ չը դառնալ։ Մենք հաւատում ենք, որ նա գործ պիտի դառնայ։ Մեր փրկութիւնը կազմակերպման մէջ է կայանում։ Այս միտքը անվերջ նուաճումներ է անում մեր մէջ։ Անկերպարան և անկազմակերպ հասարակական կեանքը մեր գերիզմանն է։ Սա արդէն զգացվում է ամենուրեք։ Դէպի կազմակերպումն է կանչում նաև Հայ Գրասիրաց Ընկերութիւնը և նրա կոչը արձագանք պիտի գտնէ բոլոր նրանց սրտում, որոնք վերջնականապէս երես չեն դարձրել մայրենի լեզուից և այդ հրաշալի գործիքի օգնութեամբ են կամենում մատուցանել բարձր պարտք և յոյզեր մատակարարել հայ ժողովրդին։ Այս վերջին տարիները Բագուի հայ մատուցողութեան մի սուտար մասը խորապէս կարիք էր զգում հայերէն մրցքերի փոխանակութիւն կատարել զանազան գրական և հասարակական խնդիրների առիթով։ Այդ իսկ նպատակով շաբաթական զրոյցատրութիւններ էին տեղի ունենում տեղիս միջազգային գրական-զեղարուեստական ակումբում։ Այժմ Հայ Գրասիրաց Ընկերութիւնը գալիս է թէ ակումբի դերը վերցնելու իր ուսերին և թէ աւելի բարձր նպատակներ հետապնդելու։

Ուրեմն, մտենանք այդ ընկերութեան և մեր եռանդագին մասնակցութեամբ մարմնացնենք նրա նպատակները։

Բագու Դ. Անանուն

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ԹԻՖԼԻՍ

◆ Երէկ փոխարքայ Վորոնցով-Դաշկով կառքով շրջեց Գոլովինսկի պրոսպեկտը և Արմեանսկի բազարը։ Ժողովուրդը ամենուրեք ողջոյն էր մատուցում փոխարքային։

◆ Քաղաքային վարչութիւնը դիմեց նահանգապետին հետևեալ գրութեամբ. «Ինտենդանտական վարչութիւնից փոխարինաբար վերցված շաքարը բոլորովին ծախվեց։ Բագուից ստացված շաքարը քաղաքը անկարող եղաւ վաճառքի հանել, որովհետև շաքարը քաղաքին ոակագնից աւելի է նստել։ Բացի այդ՝ շաքարի կարիք էին զգում քաղաքային լազարէթները և հիւանդանոցները և քաղաքային միութեան հիմնարկութիւնները, որոնց և տրված է Բագուի շաքարը։ Այժմ քաղաքում շաքար չը կայ։ Բերվելիք նոյնպէս չը կայ։ Ցեղական վաճառականները, որ շաքար են ապաստրել, շտապով յայտնել են իրանց գործակալներին, որ շաքարը հէնց տեղում ծախեն, որովհետև սակագինը Թիֆլիսում ցածր է։ Շաքարի գինը ամենուրեք խիստ բարձրացել է, այդ պատճառով Թիֆլիս բերել ձեռնտու չէ գոյութիւն ունեցող սակագնի պատճառով։ Թէ երբ կը ստացվի քաղաքի՝ Օդեսայում գնած շաքարը՝ յայտնի չէ։ Մենք անգամ հաւատացած չենք, որ վաճառողը համաձայնվի մեզ շաքար տալ պայմանաւորված գնով, որովհետև անցել են բոլոր ժամանակները, և մենք չը կարողացանք ժամանակին շաքարը բերել Օդեսայից։ Իսկ մեր շաքարն էլ—35,000 պուդ—երկար չէ բաւիւ։ Այս մասին յայտնելով ձեզ, քաղ. վարչութիւնը անհրաժեշտ է գտնում շաքարի սակագինը աւելացնել 1 կոպէկով, և խնդրել ձերդ գերազանցութիւնից կախված կարգադրութիւնը։»

◆ Յունիսի 9-ին և 16-ին Թիֆլիսի տղայոց 4-րդ գիմնազիայի շէնքում տեղի է ունենալու 2-րդ կարգի կամաւոր զինուորների (вольноопредѣляющій) քննութիւնը։ Քննութիւն տալ ցանկացողները կարող են խնդիր տալ, ներկայացնելով իրանց ուսման վկայականները։

◆ Հինգշաբթի, յունիսի 4-ին, բացվելու է առաջին հիւանդանոցը սուր-վարակիչ հիւանդութիւններ ունեցողների համար։

◆ Ինչպէս լսում ենք, պրոֆ. Ն. Մարրը այս տարի դարձեալ աշխատելու է Անիում իր օգնականների հետ։ Պրոֆեսորն այս օրերս Պետրոգրադից գալու է Թիֆլիս, ուր և մնալու է մի քանի օր։

◆ Քաղաքային վարչութիւնը շրջանային դատարանին պահանջ է ներկայացրել անուն իմ ընկ. հասցէին՝ էլեքտրաքարշի ողջ ձեռնարկութիւնը քաղաքին տալու մասին։

◆ Հայ օրիորդների կոմիտէին թոյլատրված է հրատարակել միօրեայ թերթ «Խաբիսխ» անունով, իր միջոցները աւելացնելու համար։

◆ Ներսիսեան դպրոցի հոգաբարձութիւնը 20,000 ր. է տուել Անդրկովկասի երկաթուղիների վարչութեան, որ սա երկաթուղագծի տակից նոր փողոց անց կացնի Ներսիսեան դպրոցի համար։ Փողոցը սկսվելու Պօբեդովի նրբաթաղեցից։

◆ Մեծ Իշխանուհի Տատիանա Նիկոլայեվնայի յոգնաս պատերազմից Զնամենսկի կոմիտէին Տ. Նազարեանը կիրակի օրվայ զբօսանքի և վիճակախաղի համար, որ կայացաւ պալատի այգում, նուիրել էր 500 հատ ընտիր պատկերներ (Իզմիրլեան, Խրիմեան Հայրիկը Օշականում 100-ական օրինակ) և թանգագին գրքեր, ընդամենը 323 ր. արժողութեամբ։ Բացի այդ՝ իտալական գօնդոլի համար (նոյն զբօսանքում) երգեցիկ և երաժշտական խումբը, նախաձեռնութեամբ իտալական հիւպատոս պ. Վալերիի և նրա տիկնոջ, պատրաստել է Գրական-Գեղագիտական Սալոնում երգեցողութեան պրոֆէսոր պ. Բրօջի։

◆ Կիրակի, մայիսի 31-ին, Գր.-Գեղագիտական Սալոնում կայացաւ Երաժշտական Ընկ. ընդհանուր ժողովը։ Ընկ. վարչութեան նախագահ պ. Յովսէփ Տէր-Դաւթեան բացեց ժողովը և հրաւիրեց ընտրել ընդհ. այս ժողովին նախագահ։ Ընտրվեց իրաւաբան, երգիչ պ. Վլեվսկի։ Հաստատվեց 1915 թ. նախահաշիւը և խօսվեց ընկ. նախաձեռնող ու վարչութեան եռանդուն անդամ երաժիշտ պ. Ա. Պրեվիտերին մատուցանել շնորհակալական ուղերձ։

◆ Սատացանք «Հասկեր» ամսագրի մարտ-ապրիլի միացեալ № 2-ը յաւելուածով՝ «Հորթաբած Մուսին» պօէմ Յակ. Աղաբաբի։

◆ Ստացանք «Արարատ» փետր.-մարտի միացեալ №-ը։

◆ Վրիպակ.—«Մշակի» երէկվայ №-ում «Վանը տագնապի օրերում» նամակի ամսաթիւի մէջ սպրդել է հետևեալ տպագրական սխալը. տպված է՝ «Վան, 21 Մարտի». պէտք է լինէր՝ «Վան, 21 Մայիսի»։ Նոյն №-ում «Պատերազմի արդի կացութիւնը» հեռագր. հաղորդագր. մէջ երբորդ պարբերութեան մէջ տպված է. «նոր վերոյիշեալ զօրքերով, հաւանօրէն, սպասվում է». պէտք է լինի՝ «սպառվում է»։

ՀԱՅ ԿԵԱՆՔԸ ԱՐՏԱՍԱՀՄԱՆ

ՆԱՄԱԿ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ

(Սեփ. թղթակցից)

Թաւրիզ, 11 մայիսի

«Մշակի» 93-րդ համարում տպված իմ թղթակցութեան մէջ յայտնի բողոք-հեռագիրը՝ ուղարկված առաջնորդական փոխանորդ Կարապետ աւ.-քահանայի կողմից ներքին գործերի մինիստրութեան՝ արժանացաւ բարձր ընդունելութեան. և մինիստրութիւնը յղել է հ. փոխանորդին հետևեալ հեռագիրը իրրև պատասխան.

«Սարպատական հայոց առաջնորդական արժանապատիւ փոխանորդին.

«Ձեր հեռագիրը «Իրշադ» լրագրի յօդուածի առիթով ուշադրութեան առնվեց և հարկաւոր կարգադրութիւնը կատարվեց։ Հայ ազգաբնակութեան համերաշխ լինելը պետութեան հրամանները ի գործ դնելու նկատմամբ և ձերդ արժանապատուութեան գեղեցիկ ցանկութիւնները շատ հաճելի արամադրութիւն առաջացրին»։

Հաճելի է ընդհանրապէս սպասել, որ պրովոկատորական գործակալ «Իրշադ» և ընկերութիւնը կընդունեն օգտակար խրատ և կը զգուշանան այսուհետև յուզելուց խաղաղ մտքերը։

Հայկազուն

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՅՈՎՀԱՆՆԷՍ-ԽԱՆ ՄԱՍԵՀԵԱՆԻՆ ՑԵՏ ԿՈՉԸԼԸ

Թէհրանից հեռագրում են «Русское Слово» թերթին, թէ Բերլինի պարսից դեսպան Յովհաննէս-խանը յետ է կոչված իր պաշտօնից։ Իբրև պատճառ, թերթի թղթակիցը կցում է, թէ «որովհետև նա հայ է»։

«Մշակի» ընթերցողներին քաջ յայտնի է, որ Յովհաննէս-խան Մասեհեանը Պարսկաստանի լաւագոյն դիպլոմատներից մինն է և երկար տարիներ ամենայն պատուով վարում է դեսպանի պաշտօնը և իր երկրի ու կառավարութեան վերաբերութեամբ եղել է միշտ լոյալ ու ծառայել է հաւատարմութեամբ։ Այսօր, երբ Պարսկաստանում, շնորհիւ հակառուսական շարժման, մէջլիսի և կառավարութեան մէջ տիրում է նաև հայատեցութեան ալիքը, Յովհաննէս-խանը լինում է զոհ այդ շարժման և յետ է կանչվում։ Ցաւում ենք, ի հարկէ, ոչ Յովհաննէս-խանի համար, այլ Պարսկաստանի համար, որ չը գիտէ գնահատել իր արժանաւոր գործիչներին։

Խմբագիր-հրատարակիչ՝
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

Печатать дозволено военной цензурой.

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ
(Թիֆլիսի ժամերով)

ԹԻՖԼԻՍԻՑ ՄԵԿՆՈՒՄ Է՝
№ 3 դէպի Բաթում 1 ժ. 45 ր. ցերեկ.
№ 4 » Բագու 7 ժ. 3 ր. երեկ.
№ 6 (արագ) » 12 ժ. 8 ր. ցերեկ.
№ 9 » Բաթում 8 ժ. 53 ր. երեկ.
» Զուգիա 10 ժ. 23 ր. երեկ.
» Բօրժոմ 3 ժ. 20 ր. ցերեկ.

ԺԱՄԱՆՈՒՄ Է ԹԻՖԼԻՍ՝
№ 3 Բագուից — 12 ժ. 54 ր. ցերեկ.
№ 4 Բաթումից— 5 ժ. 55 ր. երեկ.
№ 5 Բագուից (արագ) 7 ժ. 41 ր. երեկ.
№ 10 Բաթումից— 9 ժ. 51 ր. առաւ.
Զուգիայից — 6 ժ. 53 ր. առաւ.
Բօրժոմից — 7 ժ. 25 ր. առաւ.

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
Բժշկ. Բ. Նաւասարդեանի
Հիմնված 1880 թ.
(Գուկիա, Վորոնցովի արձանի հանդէպ)
Ամեն օր, բացի կիրակի օրերից
«606»-ի եւ «914»-ի ներսրսկում բժշկական խորհրդակցութեամբ՝ առ. 11—12 ժ.
ԱՌԱՒՕՏՆԵՐԸ
Բ. Ա. ՆԱՒՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան վիներական (սիֆիլիս) հիւանդութիւն։
Բ. Գ. ԱՂԱՍԱՐԵԱՆ—9½—2 ժ. ներքին, ջղային երեխայոց հիւանդութ. և ծաղկահատ.։
Մ. Մ. ԲՆԻՍԱՄՕՎԻՉ—11—12 ժ. ականջի, կոկորդի քթի հիւանդութ.։
Ա. Պ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ—12—1 ժ. երեշ. հինգ. և շաբաթ. երեխայոց ներքին և հիւ. և ծաղկահատ.։
ԿԻՆ.Բ.ԺԻԶԻ ՏԷՐ-ԴԱՒԹԵԱՆ—12-1 ժ. մանկաբարձութիւն և կանանց հիւ.։
ԵՐԵԿՈՆԵՐԸ
Մ. Մ. ԲՆԻՍԱՄՕՎԻՉ—6—7 ժ.
Վճարը 50 կ.։ Զբաւորները ձրի։ Համախորհրդի (կոնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։
Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ Բ. Նաւասարդեան
1. 0—92

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

„ՄՇԱԿԻ" ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ

Վաճառվում են հետեւեալ հրատարակութիւններից

1) ՄԱՆՐԱՆԿԱՐՆԵՐ, Վրթանէս, I և II հատորներ	1 ր.	50 կ.
2) ՄԻ ԱՄԻՍ ԱՐԵՒԵԼԲՈՒՄ, Հ. Առաքելեանի		40 կ.
3) ՀԱՅԿԱԿԱՆ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ, Լէօի, հատոր I, երկրորդ տպ.	1 ր.	20 կ.
4) ԴԷՊԻ ԱՐԱՐԱՏ, Արշ. Մխիթարեանի		40 կ.
5) ԱՐԲԵՑՈՂՈՒԹԵԱՆ ԴԷՄ		15 կ.
6) ՁԵՌՆԱՐԿ տրամաբանութեան, հոգեբանութեան, բանահիւսութեան, Հ. Առաքելեանի		50 կ.
7) ԿԵՐՈՆՆԵՐ, բանաստեղծ. հաւաքածու, Վ. Մալէզեանի	1 ր.	
8) ՅՈՒՇԱՐՁԱՆ ողբացեալ Արփիար Արփիարեանի		40 կ.
9) ՄԻ ՀՆԶԻՒՆԻ ՄԻ ԳԻՐ (վեպագրութիւն), Ստ. Մալխասեանցի		40 կ.
10) ԸՆԿԵՐՎԱՐՈՒԹԻՒՆ ԵՒ ՀԱՅ ԸՆԿԵՐՎԱՐԱԿԱՆՆԵՐ, Մուշեղ եպիսկոպոսի		35 կ.
11) ՃՈՐՏԵՐԻ ԱԶԱՏԱԳՐՈՒԹԵԱՆ ԾԻՄՆԱՄԵԱԿԸ, նկարներով		15 կ.
12) ԱՆԳԼԻԱՑԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿԵԱՆՔԸ, թարգմ. Մ.-ի		15 կ.
13) ՄԻԼՏՈՆԻ ԿԵԱՆՔԸ եւ գրական գործունէութիւնը, Հ. Առաքելեանի		30 կ.
14) ԳԱԼԻԼԷՅԻ ԿԵԱՆՔԸ եւ գիտական գործունէութիւնը, Հ. Առաքելեանի		25 կ.
15) ԱՍՏՈՒԱԾԱՅԻՆ ՀՐԱՀԱՆԳ ՀԱՆՐԱՊԱՐՏՈՒՑ, Մակ. եպ. Բարխուդարեանի		80 կ.
16) ԳՐԻԳՈՐ ՕՏԵԱՆ.	1 ր.	50 կ.
17) ԽԱՂԱՂԱՍԻՐԵԿԱՆ ՊԱՏԱՆԵԿԱԿԱՆ ԳԻՐՔ. Արթիւր Միւլլէրի, թարգմ. Իս. Յարութիւնեանի.		40 կ.
18) ՓԱՐԱՕՆՆ ՈՒ ՀԱՆՃԱՐԸ, Աւ. Եղեկեանի.		15 կ.
19) ОТВѢТЪ АРХІЕПИСКОПА МЕЛХИСЕТЕКА МУРАДЬЯНА НА ПОСЛАНІЕ РИМСКАГО ПАПЫ ЛЬВА XIII.		20 կ.
20) ՏՈՒԲԵՐԿՈՒԼՕԶԸ, ԹՈՒՔԱՀՏԸ ԵՒ ՀԱՍԱՐԱԿՈՒԹԻՒՆԸ, բժ. Արտ. Շեխեանի		20 կ.
21) ТУБЕРКУЛОЗЪ, ЧАХОТКА и ОБЩЕСТВО, բժ. Արտ. Շեխեանի		25 կ.
22) ՀԱՅ-ՎՐԱՑԱԿԱՆ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՊՐՕԲԼԷՄԸ, Բ. Իշխանեանի		20 կ.
23) ՌՈՒՍԱԿԱՆ ՎԱՆՔԵՐԸ ՖԻՆԼԱՆԴԻԱՅՈՒՄ, Գ. Տէր-Ռուբինեանցի		10 կ.
24) ԱԶԳԱՅԻՆ ԵՐԿՈՒ ՄԵԾՈՒԹԻՒՆՆԵՐ, Գ. Զօթենցի		3 կ.

Նրանք, որոնք յիշեալ գրքերից մի-մի օրինակ կը պահանջեն մեզանից՝ փողը կանխիկ ուղարկելով, կը ստանան 30% զեղչ և ճանապարհածախսը մեզ վրա։ Վերադիր վճարով պահանջողներին զեղչ կը լինի միայն 25%։ (6) 0—3

ՆՈՐԻՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՄԵԾՈՒԹԵԱՆ ԿՈՎ ԿԱՍԻ ՓՈԽԱՐԲԱՅԻ
ԴԻՒԱՆԱՏԱՆ ՏՊԱՐԱՆԸ
(ԼՕՐԻՍ-ՄԵԼԻՔՕՎԿԱՅԻ ՓՈՂՈՑ, ԱՐԲՈՒՆԱԿԱՆ ՏՈՒՆ)

կատարում է ամեն տեսակ տպարանական աշխատանքներ, այն է՝ տպագրում է լրագիրներ եւ ամսագիրներ, գրքեր, բրօշիւրներ, բլանկներ, աֆիշաներ, ծրագիրներ, հարսանեկան հրաւիրատոմսեր, այցեքարտեր եւ այլն։

Ընդունվում են տպագրական պատուէրներ հետեւեալ լեզուներով՝ ռուսերէն, հայերէն, վրացերէն, թուրքերէն, ֆրանսերէն, գերմաներէն, աբխազերէն և լեռնականների բարբառով։ Պատուէրները կատարվում են մաքուր, ճշգրիտ և չափաւոր գներով։ Ընդունվում են նաև շուտափոյթ կատարվելիք պատուէրներ առանձին պայմաններով։

Պատուիրողների ցանկութեան համաձայն, տպարանը պատուէրները կարող է կատարել տալ, կամ բրօշիւրներ շինել, ու այնու յանձնել։

ԿԱՆ ՄԵԾ ՔԱՆԱԿՈՒԹԵԱՄԲ ԶԱՆԱԶԱՆ ՏԵՍԱԿ ԹՂԹԵՐ ՊՐԻՔՍՈՒ-ԿՈՒՐԱՆՏԻ ԳՆԵՐՈՎ։

Տելեֆոն № 67.

Типографія Канцеляріи Намѣстника Его Императорскаго Величества на Кавказѣ, Лорисъ-Меликовская улица, домъ казенный